Մ-53

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ ՖԵԼԻՔՍԻ

ԽՈՐՀՐԴԱ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1945–1947 ԹԹ.

Է. 00.02. «ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»
մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2009

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր, ակադեմիկոս Մ.Կ. ԶՈՒԼԱԼՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռ.Ա. ՍԱՖՐԱՍՏՅԱՆ

պատմական գիտությունների թեկնածու Ա.Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետ

Պաշտպանությունը կայանալու է 2009 թ. դեկտեմբերի 30-ին՝ ժ. 14.00-ին, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում գործող՝ գիտական աստիճաններ շնորհող ՀՀ ԲՈՀ-ի 006 մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա, 24 գ):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2009 թ. նոյեմբերի 30-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար
պատմական գիտությունների թեկնածու՝ Ռ. ՂԱԶԱՐՅԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, մասնավորապես 1945–1947թթ. խորհրդա-թուրքական հարաբերությունների ուսումնասիրությունն ունի գիտական կարևոր նշանակություն և արդիականություն: Հետազոտության թեման առաջին հերթին օրախնդիր է Հայկական հարցի նորագույն շրջանի պատմության մութ էջերի բացահայտման տեսանկյունից: Հետպատերազմյան առաջին տարիներին խորհրդա-թուրքական լարվածությանը, հատկապես հայկական հողային հարցի՝ միջազգային ասպարեզում հայտնվելու փաստին խորհրդային պատմագրության մեջ մեծ տեղ չի հատկացվել: Ուսումնասիրվող հիմնախնդիրն արդիական է նաև այն առումով, որ մինչ օրս և՛ սևծովյան նեղուցների, և՛ Թուրքիայի տնօրինության տակ գտնվող հայկական տարածքների հարցերը շարունակում են մնալ միջազգային հանրության ուշադրության կենտրոնում:

Առաջ քաշելով սևծովյան նեղուցների վերահսկման հարցը՝ խորհրդային դիվանագիտությունը փորձում էր իրականացնել «տաք ծովեր» դուրս գալու ռուսական դարավոր երազանքը: ԽՍՀՄ-ի դիվանագիտական ակցիայի իրական դրդապատճառը երկրի անվտանգության ապահովման անհրաժեշտությունն էր, այսինքն՝ վերահսկելով Սև ծովը՝ ԽՍՀՄ-ը կարող էր իրեն ավելի ապահով զգալ կապիտալիստական աշխարհից: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո թեպետ փոխվել է աշխարհաքաղաքական իրավիճակը, սակայն գերտերությունների միջև մինչ օրս շարունակվում է այս տարածաշրջանի համար գերիշխանության պայքարը: Դա նշանակում է, որ ինչպես խնդրո առարկա ժամանակահատվածում, այնպես էլ մեր օրերում Ռուսաստանի Դաշնության, սևծովյան երկրների ու Արևմուտքի համար քննարկվող հարցն ունի սկզբունքային նույն կարևորությունը:

«Նյարդերի պատերազմում» (խորհրդա-թուրքական հարաբերություններում առաջացած ճգնաժամը պատմության մեջ հայտնի է այս անունով)[1] Բոսֆորի և Դարդանելի վերահսկումից բացի, պայքար էր ընթանում նաև Կարսի ու Արդահանի համար: Հատկանշական է, որ 1945 թ. Խորհրդային Միությունն առաջին անգամ էր հանդես գալիս հայկական հողերի պահանջատիրոջ դերում. դա անչափ կարևոր փաստ է այդ տարիների համար, քանզի սփյուռքահայերից բացի ԽՍՀՄ-ի նման գերտերությունը Թուրքիայից տարածքներ պահանջելով՝ միջազգային հանրության ուշադրությունն էր հրավիրում այս հարցի վրա: Հարկ է նկատել, որ Մոսկվան գործում էր զգուշորեն, բացեիբաց չարտահայտելով իր հետաքրքրությունները, Անկարայի առջև դրված հողերի վերադարձման պահանջը ներկայացնում էր նախ Խորհրդային Հայաստանի, ապա նաև Խորհրդային Վրաստանի անունից: Այդ պահանջի համաձայն՝ Թուրքիան պետք է իր տարածքի մոտ քսան տոկոսը վերադարձներ դրա իրական տիրոջը, ինչը մեծ հարված և կորուստ էր լինելու թուրքերի համար: Այս կերպ ԽՍՀՄ-ը, բարձրացնելով հայկական հողերի վերամիավորման հարցը մի կողմից ցանկանում էր պատժել Անկարային պատերազմի տարիներին «չեզոքության» քողի տակ վարած հակախորհրդային քաղաքականության համար, հիշեցնում էր իր հարևանին, որ Հայկական հարցը

[1] «Նյարդերի պատերազմ» արտահայտության փոխարեն սփյուռքահայ հեղինակներն օգտագործում են «ջղերի պատերազմ» արտահայտությունը:

մոռացված չէ, մյուս կողմից էլ հնարավորություն էր ստանում մեծացնել ազդեցությունը նավթով հարուստ մերձավորարևելյան շրջաններում և սահմանակից դառնալ Իրաքին ու Սիրիային:

Փաստերը վկայում են, որ ստալինյան վարչակազմը վերոգրյալ հարցերում վճռական էր տրամադրված Թուրքիայի նկատմամբ, և նույնիսկ նրան չէր հուզում, որ վերջինս էլ է ՍԱԿ-ի անդամ: Սակայն հետպատերազմյան ժամանակաշրջանում միջազգային իրադրության կտրուկ փոփոխությունը, ԽՍՀՄ-ում ստեղծված սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակը Ի. Ստալինին ստիպել է ժամանակավորապես սառեցնել այդ ծրագիրը, իսկ նրա մահից հետո Ն. Խրուշչովն ընդհանրապես հրաժարվել է դրանից:

25 տարվա լռությունից հետո՝ 1945 թ., Թուրքիային ներկայացված ԽՍՀՄ-ի հողային պահանջը խթան հանդիսացավ Հայկական հարցի վերաարծարծման համար: Դրան զուգընթաց Սփյուռքում սկսված գործողությունները նպաստեցին Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացի սկզբնավորմանը, որը շարունակվում է մինչ օրս: Ներկայումս ընթացող աշխարհաքաղաքական զարգացումները նոր երանգ են հաղորդում խնդրո առարկա հարցին՝ կարևորելով դրա արդիականությունը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ատենախոսության թեմայի ընտրությունը պայմանավորված է 1945–1947 թթ. խորհրդա-թուրքական հարաբերություններում ծագած հիմնահարցերի համակողմանի և հիմնավոր լուսաբանման անհրաժեշտությամբ, որն իրականացնելու համար դրվել են հետևյալ խնդիրները.

- ներկայացնել Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին «չեզոքության» քողի տակ Անկարայի վարած հակախորհրդային քաղաքականությունը, որն էլ Մոսկվայի համար հիմք է հանդիսացել Թուրքիայի դեմ նախատեսված ծրագրերի իրականացման համար,
- վերլուծել հետպատերազմյան խնդրո առարկա ժամանակաշրջանում խորհրդա-թուրքական հարաբերություններում ծագած ճգնաժամը և դրա կոնկրետ դրսևորումը,
- ուսումնասիրել սևծովյան նեղուցների ու Թուրքիայից հողերի պահանջատիրության հարցերում ինչպես պաշտոնական Անկարայի և Մոսկվայի, այնպես էլ Վաշինգտոնի ու Լոնդոնի մոտեցումները և որդեգրած քաղաքականությունը,
- վեր հանել Մեծ տերությունների դերը 1945–1947 թթ. Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ,
- պարզաբանել այն պատճառները և դիտարկել ձեռնարկված քայլերը, ինչպես նաև աշխարհում ստեղծված քաղաքական իրավիճակը, որոնց հետևանքով ԽՍՀՄ-ի կողմից Թուրքիային ներկայացված պահանջները տևական քննարկումներից հետո այդպես էլ լուծում չստացան,
- ներկայացնել ու վերլուծել խորհրդային, թուրքական, սփյուռքահայ և արևմտյան մամուլում սևծովյան նեղուցների ու տարածքային պահանջների շուրջ արված մեկնաբանությունները,
- դիտարկել Խորհրդային Միության և հայ եկեղեցու համագործակցությունը՝ հայկական հողային պահանջատիրության ու ներգաղթի հարցերում,

- հետազոտել հայկական գաղթօջախներում ստեղծված Ազգային խորհուրդների և «Հայերի իրավունքների պաշտպանության ամերիկյան կոմիտեի» հայանպաստ գործունեությունը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Պատմագրության մեջ դեռևս չկա առանձին ուսումնասիրություն, որը նվիրված լինի 1945–1947 թթ. խորհրդա-թուրքական հարաբերություններին՝ ատենախոսության առջև դրված հիմնախնդիրների լուսաբանման կտրվածքով: Ատենախոսությունը՝ արխիվային, մամուլի նյութերի, թեմային առնչվող բազմաթիվ ուսումնասիրությունների հենքի վրա խնդրո առարկա հարցի մասին կատարված աշխատանքն է, ուր համապարփակ ներկայացվում են 1945–1947 թթ. խորհրդա-թուրքական հարաբերություններում ծագած առանձին խնդիրներ, մասնավորապես սևծովյան նեղուցների վերահսկման և հողային պահանջատիրության ու դրան սերտորեն առնչվող մի շարք այլ հարցեր: Ուստի, սույն ատենախոսությունը որպես հիմնահարցերի նման լայն շրջանակի համակողմանի և ամբողջական ուսումնասիրության առաջին փորձ՝ նորույթ է պատմագրության մեջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Ուսումնասիրությունն ընդգրկում է 1945 թվականից մինչև 1947 թվականն ընկած ժամանակաշրջանը: Ատենախոսության ժամանակաշրջանի ընտրությունը պայմանավորված է 1945–1947 թվականներին խորհրդա-թուրքական հարաբերություններում ծագած ճգնաժամի ուսումնասիրության անհրաժեշտությամբ: Սակայն, նկատի ունենալով հետազոտվող հիմնահարցի արդիական և հրատապ լինելը, դրա գործընթացների մասին ավելի խորը պատկերացում կազմելու համար շարադրանքի սկզբում նպատակահարմար ենք գտել ուսումնասիրվող հիմնահարցի կտրվածքով անդրադառնալ Երկրորդ համաշխարհային պատերազմին, քանզի այդ տարիներին (1939–1945 թթ.) Անկարայի կառավարության վարած հակախորհրդային քաղաքականությունն է հիմք հանդիսացել խորհրդա-թուրքական հարաբերությունների հետագա լարվածության համար: Նման մոտեցումը, անշուշտ, պայմանա-վորված է ուսումնասիրությունն ամբողջական դարձնելու անհրաժեշտությամբ և հիմնահարցի գիտաքաղաքական կարևորությամբ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Ատենախոսությունը շարադրելիս առաջնորդվել ենք սկզբնաղբյուրների, փաստաթղթերի, մամուլի տվյալների և գրականության քննախույզ հետազոտության և պատմահամեմատական-համադրական ուսումնասիրության մեթոդաբանությամբ: Հետազոտվող խնդիրները դիտարկել ենք փաստագրական նյութերի վերլուծական քննության միջոցով:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքն ունի ոչ միայն գիտական, այլև գործնական-կիրառական նշանակություն: Ատենախոսության մեջ ներկայացված փաստերը, առաջ քաշված դրույթները, մեկնաբանություններն ու եզրահանգումները, նկատառումները կարող են օգտակար լինել ինչպես Հայաստանի և Թուրքիայի, նաև Մեծ տերությունների նորագույն

պատմության արտաքին քաղաքականության խնդիրներին ու Հայկական հարցին նվիրված ուսումնասիրությունների, այնպես էլ բուհերի դասախոսների և ուսանողների համար: Բացի այդ, աշխատանքում տեղ գտած դրույթները կարող են օգնել պետական համապատասխան մարմիններին՝ խնդրո առարկա տարիներին Հայկական հարցի վերաբերյալ ԽՍՀՄ-ի ու Թուրքիայի դիրքորոշումը պարզելու և Սփյուռքի հետ կապերն ամրապնդելու տեսանկյունից:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդում: Աշխատությունը քննարկել և հրապարակային պաշտպանության է երաշխավորել նույն համալսարանի համաշխարհային պատ-մության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը:

Ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրահանգումները արտացոլված են հեղինակի հրատարակած մեկ գրքույկում և 3 հոդվածներում, ինչպես նաև հանրապետական գիտաժողովներում կարդացած զեկուցումներում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը շարադրված է հայերեն, ռուսերեն, թուրքերեն, անգլերեն ու ֆրանսերեն լեզուներով տարաբնույթ աղբյուրների և ուսումնասիրությունների, մասնավորապես արխիվային նյութերի, պաշտոնական փաստաթղթերի, պարբերականների, հայ և օտարազգի հետազոտողների՝ խնդրո առարկա թեմային նվիրված աշխատությունների ու հոդվածների քննական հետազոտության ու վերլուծության հիման վրա:

Թեմայի գիտական մշակման համար բացառիկ կարևորություն ունեն արխիվային նյութերը, որոնք նոր լույս են սփռում հիմնահարցի բազմաթիվ կողմերի վրա: Ուսումնասիրության համար իբրև սկզբնաղբյուր է ծառայել Հայաստանի ազգային արխիվում պահվող 1945 թ. Թուրքիային ԽՍՀՄ-ի ներկայացրած հայկական հողային պահանջատիրության շուրջ Խորհրդային Հայաստանի կառավարությունում ընթացած քննարկումներին վերաբերող նյութերը, ինչպես նաև սփյուռքահայերի խնդրագիր նամակները, որոնք ուղղված էին ԽՍՀՄ-ի, Խորհրդային Հայաստանի, Մեծ տերությունների և միջազգային կազմակերպությունների ղեկավարներին[2]: Աշխատության մեջ օգտագործվել են 1945–1947 թթ. Ամերիկահայ ազգային խորհրդի պատրաստած և միջազգային կազմակերպություններին ներկայացրած Հայկական հարցին վերաբերող հուշագրերը[3], որոնցում անդրադարձ է կատարվում հայ ժողովրդի պատմության էջերին,

[2] Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ.1 և 326:

[3] *Armenian National Council of America*, A Memorandum Relating to the Armenian Question, New York, April, 1945, p. 11; The Case of the Armenian People, Memorandum to the United Nations Conference on International Organization in San Francisco, New York, June 4, 1945, p. 7; The Armenian Cause, New York, 1945, p. 4; Text of Memorandum to the Big Three in Session in Potsdam, Germany, New York, July 17, 1945, p. 3; Text of Memorandum Sent to the Council of Ministers for Foreign Affaires in London, New York, September 15, 1945, p. 3; Text of Memorandum Sent by Cabel to the Assembly of the United Nations in London by the Armenian National Council of America and by the Conference of Armenian Compatrictico Societies in New York, New York, January 31, 1946, p. 2; A Memorandum on the Armenian Question, Presented to the Council of Foreign Ministers, New York, March 7, 1947, p. 7; The Resolution to the United Nations Submitted by the World Armenian Congress, New York, 1947, p. 11; An Appeal, to the Member Governments and Their Delegates to the United Nations, New York, July 1, 1947, p. 5; Memorandum Proposed Aid to Greece and Turkey Presented to the Government of the Unaited States by the Armenian National Council of America, New York, 1947, p. 6; Armenian National Council-Alexandria, Armenian Claims in the Light of Documents, Memorandum Submitted to the United Nations Organization Meeting in London, Alexandria, January 10, 1946, p. 6.

ակներ Ջ. Արջայուրեքի[4], Դ. Ավջըօղլուի[5], Ա. Դելիօրմանի[6], Ֆ. Էրքինի[7], Թ. Ունալի[8] աշխատությունները, որոնցում պատմական մի շարք փաստեր և իրողություններ միակողմանի են ներկայացվում կամ ուղղակի խեղաթյուրվում են՝ հօգուտ Թուրքիայի շահերի: Դրանցում հիմնականում արտահայտվում է պաշտոնական Անկարայի տեսակետը, ըստ որի՝ Մոսկվան բացահայտորեն մեղադրվում է ծավալապաշտության համար: Այդ հեղինակների մի մասն ակնարկում է, որ եթե ԱՄՆ-ն չմիջամտեր, ապա ԽՍՀՄ-ը կիրականացներ խորհրդա-թուրքական սահմանի ընդարձակման իր ծրագրերը: Մասնավորապես, Ջ. Արջայուրեքի աշխատությունը, որը փաստաթղթերի ժողովածու է, բաղկացած ամերիկյան և բրիտանական 1939–1950 թթ. զեկուցագրերից, որոնցում ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի դեսպանատները գնահատականներ են տալիս ինչպես Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Թուրքիայի վարած քաղաքականությանը, այնպես էլ հետպատերազմյան շրջանում խորհրդա-թուրքական հարաբերություններում ծագած ճգնաժամին, խոսելով թե՛ սևծովյան նեղուցների, թե՛ հայկական հողային պահանջի մասին: Թուրք հեղինակը չի հերքել տարածքների խնդրի պաշտոնական պահանջը, սահմանափակվել է միայն փաստաթղթեր ներկայացնելով և որոշակի ենթատեքստով հասկացրել, որ ԽՍՀՄ-ի ծրագրերի ձախողմանը նպաստել է Վաշինգտոնը:

Խորհրդա-թուրքական հարաբերություններում ԱՄՆ-ի խաղացած փրկչի դերը կասկածի տակ են դնում թուրք պատմաբաններ Դ. Ավջըօղլուն և Ա. Շյուբրուն: Առաջինը՝ «Ազգային ազատագրության պատմություն» աշխատությունում, երկրորդը՝ «Թուրքիայի փրկիչը Ամերիկա՞ն է» հոդվածում[9] զարգացրել են այն տեսակետը, թե ԱՄՆ-ն պատրաստվում էր Թուրքիային ցույց տալ միայն տնտեսական օգնություն. պատերազմի դեպքում ԽՍՀՄ-ի դեմ հանդիման նրան թողնելու էին միայնակ:

Հարկ է առանձնացնել նաև թուրք հեղինակներից Տ. Աթայովի[10], Ֆ. Արմաօղլուի[11], Ա. Հալիլի[12], Ք. Օզթուրքի[13] աշխատությունները, որոնցում միակողմանիորեն է ներկայացվում այդ տարիներին արտաքին քաղաքականության մեջ Թուրքիայի որդեգրած հակախորհրդային ուղղվածությունը, ինչը հանգեցրել է Վաշինգտոն-Անկարա մերձեցմանը:

Ադրբեջանցի պատմաբաններն այսօր հանդես են գալիս Թուրքիայի դիրքորոշման պաշտպանությամբ և վերջինիս ներկայացնում են որպես զոհ: «Իոսիֆ Ստալինի «քրդական ծրագիրը»» հոդվածում Ա. Բագիրովը գրում է, թե հետպատերազմյան տարիներին Թուրքիային մեկ քայլ էր բաժանում պատերազմից, և միայն Ստալինի մահն է փրկել վերջինիս: Ավելին, իշխանության եկած Ն. Խրուշչովն անձամբ է ներողություն խնդրել Մոսկվայում Թուրքիայի դեսպանից «ստալինյան անարդարության»

[4] *Arcayürek C.*, Şeytan Üçgeninde Türkiye, Ankara, 1987.

[5] *Avcıoğlu D.*, Milli Kurtuluş Tarihi, Üçüncü kitap, İstanbul, 1974.

[6] *Deliorman A.*, Türklere Karşı Ermeni Komiteciler, İstanbul, 1973.

[7] *Erkin F.*, Türk-Sovyet ilişkileri ve Boğazlar, Ankara,1968.

[8] *Unal T.*, 1700 den 1958 e Kadar Türk Siyasi Tarih, Ankara, 1958.

[9] Sti'u, Ulus (İstanbul), 23. IV. 1975.

[10] *Ataöv T.*, Türkish Foreign Policy, Ankara, 1965, s. 96; *Նույնի՝* США, НАТО и Турция, М., 1973.

[11] *Armaoğlu F.*, Belgelerle Türk-Amerikan Münasebetleri, Ankara, 1991.

[12] *Halil A.*, Atatürkçü dış politika ve NATO ve Türkiye, İstanbul, 1968.

[13] *Öztürk K.*, Türkiye Cumhuriyeti hükümetleri ve programları, İstanbul, 1968; *Նույնի՝* Cumhurbaşkanlarının Türkiye Büyük Millet meclisinin açış nutukları, İstanbul, 1969.

դային կողմի ձեռնարկած քայլերը, նաև անդրադարձել է սփյուռքահայերի գործունեությանը: Ռ. Կորխմազյանը մանրամասն վերլուծության է ենթարկում Պոտսդամի խորհրդաժողովում ԽՍՀՄ-ի կողմից Թուրքիայի առջև դրված հողային պահանջատիրության հարցը, բերում է խորհրդաժողովին վերաբերող մի շարք նոր փաստաթղթեր: Ա. Գասպարյանն էլ մանրակրկիտ քննարկման է ենթարկում հետպատերազմյան ժամանակաշրջանում նեղուցների վերաբերյալ Մոսկվայի և Անկարայի միջև փոխանակված հայտարարագրերը, ինչպես նաև Վաշինգտոնի ու Լոնդոնի՝ այս հարցում ունեցած դիրքորոշումը:

Ատենախոսության մեջ մեծապես օգտագործվել են սփյուռքահայ հեղինակների ուսումնասիրությունները: Այսպես, Գ. Ահարոնյանը, Հ. Աղպաշյանը, Ա. Անդրեասյանը, Ա. Դարբինյանը, Յ. Զաքարեանը, Ա. Էլճանեանը, Գ. Լազեանը, Լ. Կյուրեղյանը, Հ. Ղազարյանը, Ս. Մխիթարյանը, Վ. Նավասարդյանը, Լ. Չորմիսյանը, Մ. Սերոբյանը, Չ. Վրթանեսը, Ս. Աղամյանը իրենց ուսումնասիրություններում անդրադարձել են Հայկական հարցին[24]: Նրանք հատկապես խոսել են հետպատերազմյան ժամանակաշրջանում Սևրի պայմանագրի համաձայն տարածքների վերանայման խնդրի վերստին բարձրացման ու զարգացման ընթացքի մասին, այսինքն՝ Ազգային խորհուրդների ստեղծմանը և դրանց գործունեությանը, Հայաստան ներգաղթի կազմակերպման գործում եկեղեցու և խորհուրդների ակտիվ մասնակցությանը, Համահայկական համաշխարհային կոնգրեսի հրավիրմանը: Այս աշխատություններում առկա են փաստեր, որոնք պարզաբանում են նաև Մեծ տերությունների դիրքորոշումը հայկական հողային պահանջատիրության հարցում:

Արևմտյան հեղինակներ Դ. Աչեսոնի, Ջ. Ալեքսանդրի, Օ. Քարոյեի, Դ. Դալլինի, Դ. Բրինքլեի, Է. Վեր Հոդջի, Չ. Հոստլերի, Ջ. Հուրվիթսի, Ջ. Քիրքի, Վ. Լեվիսի, Ռ. Ֆրայի, Լ. Ռափոփորթի, Ա. Վալի Ֆերենցի, Մ. Սթոֆի, Հ. Տրումենի, Վ. Քեյլորի, Պ. Կալվոկորեսի և այլոց աշխատությունները[25] ևս կարևոր նշանակություն ունեն ուսումնասիրվող

---

[24] *Ահարոնյան Գ.*, Մեծ երազի ճամբուն վրայ …, Պէյրութ, 1964: *Աղպաշյան Հ.*, Հայկական հարցը երեկ և այսօր, Պէյրութ, 1945: *Անդրեասյան Ա.*, Հայկական դարի նոր հանգրվանը, Պէյրութ, 1967: *Նույնի՝* Սփյուռքը և հայրենիքը, Պէյրութ, 1962: *Դարբինյան Ա.*, Հայ ազատագրական շարժման օրերն, Փարիզ, 1947: *Զաքարեան Յ.*, Կարս (պատմա-աշխարհագրական տեսութիւն), Երուսաղէմ, 1946: *Էլճանեան Ա.*, Հայ կաթոլիկ Պատրիարքարանի դիրքը Խորհրդային Հայաստանին, ներգաղթին և հայկական դատին հանդեպ, Պէյրութ, 1946: *Լազեան Գ.*, Հայաստան եւ Հայ Դատը, Կահիրե, 1946: *Նույնի՝* Հայաստան եւ Հայ Դատը հայ եւ ռուս յարաբերութիւններու լոյսին տակ, Կահիրե, 1957: *Կյուրեղյան Լ.*, Կարս և Արդահան, պատմական հավատիք և հայրենավանդ իրավունք, Վենետիկ, 1949: Հայ ազգային դատը, Թուրքական Հայաստանի ազատագրմանը վերաբերող վավերաթղթեր, Փարիզ, 1946: *Ղազարյան Հ.*, Ուիլսոնյան Հայաստանը, Բոստոն, 1945: *Մխիթարյան Ս.*, Հայկական հարցը արխիվային պրպտումների վերլուծումներով, Փարիզ, 1968: *Նավասարդյան Վ.*, Բոլշևիզմը և դաշնակցությունը, Կահիրե, 1949: *Չորմիսյան Լ.*, Կուսակցությունները և Հայրենիքը, Փարիզ, 1946: *Նույնի՝* Կուսակցությունները, Պէյրութ, 1965: *Սերոբյան Մ.*, Մեր պայքարը հայ ազատագրության ուղիով, Կահիրե, 1948: *Նույնի՝* Հայաստանի անկախության առթիվ, Կահիրե, 1950: *Վրթանես Չ.*, Հայկական հարցը այսօր, Նյու Յորք, 1945: *Նույնի՝* Հայկական հարցի պատմական ընթացքը, Նյու Յորք, 1946: *Նույնի՝* Armenia Reborn, New York, 1947; *Նույնի՝* The Armenian question today, New York, 1946; *Atamian S.*, The Armenian Community, New York, 1955.

[25] *Acheson D.*, Present at the Creation, My Years in the State Department, New York, 1969; *Alexander G.*, The Prelude to the Truman Doctrine: British Policy in Greece, 1944-1947, New York, 1984; *Caroe O.*, Soviet Empier, the Turks of Central Asia and Stalinism, London, 1953; *Dallin D.*, Soviet Russia and the Far East, New Haven, 1948; *Brinkley D.*, Dean Acheson and the Making of U.S. Foreign Policy, New York, 1992; *Vere Hodge E.*, Turkish Foreign Policy During 1918-1948, Geneva, 1950; *Hostler C.*, Turkism and the Soviets, London, 1957; *Hurewitz J.*, Diplomacy in the Near and Middle East. A Documentary Record 1914-1956, New York, 1972; *Kirk G.*, A Short History of the Middle East, London, 1948; *Lavis T.* and *Frye R.*. The United States and Turkey and Iran, Cambridge, 1952; *Rapoport L.*, Stalin's War Against the Jews: The Doctor's Plot and the Soviet Solution, New York, 1990; *Russell D.*, Soviet-American Relations in Asia, 1945-1954, New York, 1981; *Vali Ferenc A.*, The Turkish Straits and NATO, Stanfard, 1972; *Stoff M.*, Oil, War, and American Security: The Search for a National Policy on Foreign Oil, 1941-1947, New York, 1980; *Truman H.*, Memories by Harry Truman, Year of decision, New York, 1965; *Keylor W.*, The Twentieth Century World: An International History, London, 1992; *Кальвокоресси П.*, Мировая политика после 1945 г., ч. 1. М., 2000.

թեմայի տարբեր ասպեկտների պարզաբանման գործում: Այս աշխատություններում մասնավորապես անդրադարձ կա ինչպես նեղուցների և տարածքային պահանջատիրության խնդիրներին, այնպես էլ Մեծ տերությունների թուրքանպաստ քաղաքականությանը: Այսպես, Դ. Աչեսոնը հստակորեն և օբյեկտիվորեն ընդգծում է հետպատերազմյան ժամանակաշրջանում Վաշինգտոնի թուրքամետ քաղաքականության իրական դրդապատճառները, հետապնդած շահերն ու ակնկալիքները: Նա չի թաքցնում, որ Սպիտակ տունը որոշել էր ամեն գնով ընդդիմանալ Անկարային ներկայացրած Մոսկվայի պահանջներին և այդ ուղղությամբ ձեռնարկել է լուրջ քայլեր: Իսկ, օրինակ, Է. Վեր Հոդջին իր աշխատության մեջ մանրամասն անդրադարձել է միայն նեղուցների խնդրին, ինչ վերաբերում է տարածքային պահանջին, ապա սահմանափակվել է տեղեկատվությամբ, որ 1945 թ. կրկին բարձրացվել է Կարսի և Արդահանի հարցը: Հարկ է նշել, որ արևմտյան հեղինակների մեծ մասը նախընտրում է չխոսել 1945 թ. ԽՍՀՄ-ի կողմից բարձրացված հայկական հողային պահանջատիրության մասին:

Ատենախոսության մեջ լայնորեն օգտագործվել է խորհրդային, թուրքական, հայկական, սփյուռքահայ, անգլիական և ամերիկյան մամուլի էջերում տպագրված խնդրո առարկա հիմնահարցերին առնչվող նյութերը:

Օգտագործված գրականության համառոտ տեսության լուսաբանումից ակնհայտ է դառնում, որ սույն ատենախոսության մեջ քննարկված հիմնահարցերը ինչ-ինչ առումներով ուսումնասիրվել են, սակայն մինչ օրս չկա աշխատություն՝ հիմնախնդրի հետազոտման ամբողջական կտրվածքով: Հարկ է նշել, որ հայկական տարածքների շուրջ 1945 թ. միջազգային ասպարեզում սկսված գործընթացը, հայկական հարցի նորագույն շրջանի պատմության կարևոր իրադարձություններից է, որն ունի անհասկանալի և մութ բազում էջեր: Մոտ կես դար խորհրդային պատմաբանների կողմից հասկանալի պատճառներով այն մոռացության է մատնվել, իսկ թուրք և արևմտյան հեղինակները սահմանափակվել են մեկ-երկու նախադասությամբ, գրելով, որ ԽՍՀՄ-ը Թուրքիայից պահանջել է Կարսն ու Արդահանը: Թեման հիմնականում շոշափվել է սփյուռքահայերի աշխատություններում, սակայն դա բավարար չէ իրադարձությունների իրական պատկերը վերականգնելու համար, քանզի դրանք միակողմանի են ներկայացվում, այսինքն՝ տրվում է միայն Սփյուռքում ծավալված աշխատանքը: Արդյունքում, արդի ուսումնասիրողները, հիմնվելով դրանց վրա, հիմնական շեշտը դնում են միայն Պոտսդամի խորհրդաժողովում հարցի շուրջ ընթացած քննարկումներին, մինչդեռ այն օրակարգում է եղել ներառյալ 1947 թ.:

Այսպիսով՝ ատենախոսության մեջ առաջին անգամ փորձ է արվել լրացնել այդ բացը, համակողմանի և խորությամբ ուսումնասիրել թե՛ սևծովյան նեղուցների, և թե՛ հայկական հողային պահանջատիրության հարցերը՝ վերականգնելով 1945–1947 թթ. իրադարձությունների ժամանակագրական ողջ շղթան:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, որոնք իրենց հերթին բաժանվում են տասնչորս ենթագլխի, վերջաբանից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից: Աշխատության ծավալը 197 էջ է:

Ներածության մեջ խոսվում է թեմայի արդիականության հիմնավորման, ատենախոսության խնդիրների ու նպատակների մասին, պարզաբանվում է աշխատանքի գիտական նորույթը, տրվում են թեմայի ժամանակագրական սահմանները և մեթոդաբանական հիմքը, հիմնավորվում է աշխատանքի գործնական նշանակությունը, ներկա-

յացվում է օգտագործված գրականության համառոտ տեսությունն ու թեմայի ուսումնասիրության աստիճանը:

Ատենախոսության առաջին գլուխը՝ «**Խորհրդա-թուրքական հարաբերությունները Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին (1939–1945 թթ.)**», բաղկացած է հինգ ենթագլխից:

Առաջին՝ *«Թուրքիայի դիրքորոշումը՝ Երկրորդ համաշխարհային պատերազմում առաջին փուլում»*, ենթագլխում ներկայացվում է Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Թուրքիայի որդեգրած քաղաքականությունը, մասնավորապես, մեկնաբանվում են այդ տարիներին Մեծ Բրիտանիայի և Գերմանիայի համար տարածաշրջանում Թուրքիայի դերի մեծացման հիմնական պատճառները, այդ թվում՝ Անկարայի հետապնդած աշխարհաքաղաքական նպատակները: Շոշափվում է նաև Հայրենական պատերազմի նախօրեին խորհրդա-թուրքական հարաբերություններում տիրող իրավիճակը:

«Խորհրդա-թուրքական հարաբերությունները 1941–1943 թթ.» վերնագրով երկրորդ ենթագլխում ներկայացվում է 1941–1943 թթ. «չեզոքության» քողի տակ ի նպաստ ֆաշիստական բլոկի երկրների Թուրքիայի վարած երկակի խաղը: Հանգամանորեն լուսաբանվում է Անկարայի հակախորհրդային քաղաքականությունը, հատկապես՝ ԽՍՀՄ-ին վերաբերող ծավալապաշտական ծրագրերը, ինչը սրել է Մոսկվայի և Անկարայի հարաբերությունները:

Երրորդ՝ *«1943 թ. Թուրքիային պատերազմի մեջ ներքաշելու Մեծ Բրիտանիայի փորձերի շուրջ»*, ենթագլխում մանրամասն անդրադարձ կա Թեհրանի վեհաժողովում դաշնակից երկրների կողմից Թուրքիային պատերազմի մեջ ներքաշելու հարցի քննարկմանը, Կահիրեում կայացած անգլո-ամերիկյան երկրորդ խորհրդաժողովի ընթացքին, Թուրքիայի կառավարության դիրքորոշմանը:

Չորրորդ ենթագլխում՝ *«Խորհրդա-թուրքական հարաբերությունները 1944 թ. վերջին 1945 թ. սկզբին»*, ներկայացվում է, թե Թուրքիան ի՞նչ պայմաններում և ի՞նչ նպատակով է պատերազմ հայտարարել ֆաշիստական երկրներին: Մանրամասն քննարկվում է նաև մինչ պատերազմի ավարտը Մոսկվայի դեմ Անկարայի ձեռնարկված քայլերը:

1944 թ. չնայած Թուրքիան պաշտոնապես խզել էր դիվանագիտական և տնտեսական բոլոր հարբերությունները առանցքի երկրների հետ, սակայն այդպես էլ պատերազմ չէր հայտարարել վերջիններիս: Եվ երբ Ղրիմի կոնֆերանսում (1945 թ. փետրվարին) քննարկվում էր ՄԱԿ-ին անդամակցության հարցը, և որոշվել էր հիմնական անդամներ ընդունել Գերմանիայի դեմ պատերազմ հայտարարած երկրներին, Ի. Ստալինը ՈՒ. Չերչիլի պնդումով համաձայնվեց Թուրքիային ընդգրկել ՄԱԿ-ի հիմնական անդամների կազմում՝ Անկարայից պահանջելով անհապաղ պատերազմ հայտարարել առանցքի երկրներին: Թուրքիան, Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի ճնշմամբ, 1945 թ. փետրվարի 23-ին պատերազմ հայտարարեց Գերմանիային և Ճապոնիային՝ ռազմաճակատ չուղարկելով ոչ մի զինվոր: Չնայած այս քայլով Թուրքիան հնարավորություն ստացավ դառնալու ՄԱԿ-ի անդամ և օգտվելու արևմտյան երկրների հովանավորությունից, սակայն այդպես էլ չկարողացավ մեղմել ԽՍՀՄ-ի վերաբերմունքը:

1945 թ. մարտի 19-ին ԽՍՀՄ-ը չեղյալ է հայտարարել 1925 թ. դեկտեմբերի 17-ի կնքված խորհրդա-թուրքական «բարեկամության» պայմանագիրը: Ապրիլից երկու երկրների միջև սկսվում են բանակցությունները: Ի պատասխան Թուրքիայի այն հայտարարության, թե իրենք պատրաստ են նոր պայմանագիր կնքել Մոսկվայի հետ՝ ցանկացած պայմաններով, ԽՍՀՄ-ը ներկայացրել է իր պահանջները: Հունիսի 7-ին

ԽՍՀՄ-ի արտգործնախարար Վ. Մոլոտովը Մոսկվայում Թուրքիայի դեսպան Ս. Սարպերին տեղեկացրել է, որ մինչև նոր պայմանագիր ստորագրելը անհրաժեշտ է լուծել ինչպես սևծովյան նեղուցների հարցը, այնպես էլ կարգավորել խորհրդա-թուրքական սահմանները[26]: Խոսքը Կարսի և Արդահանի մասին էր: Հանդիպումից անմիջապես հետո Սարպերը հեռագիր է ուղարկել Անկարա և տեղեկացրել ԽՍՀՄ-ի ներկայացրած պահանջները:

Հունիսի 18-ին կողմերի միջև կայացած երկրորդ հանդիպման ժամանակ, ԽՍՀՄ-ի արտգործնախարարը Սարպերին կրկին հայտնել է, թե երկու երկրների միջև նոր պայմանագիրը հնարավոր է միայն հունիսի 7-ին ներկայացված պահանջների ընդունման դեպքում՝ պատճառաբանելով, թե Խորհրդային Հայաստանը հողի կարիք ունի: Եվ թեպետ Թուրքիան ձգտում էր վերականգնել խորհրդա-թուրքական պայմանագիրը, սակայն ամենևին ոչ այս հողերի հաշվին: Թուրքական մամուլի գնահատմամբ՝ Անկարային ներկայացրած Մոսկվայի պահանջները հանդիսանում էին ԽՍՀՄ-ի՝ ցարական Ռուսաստանից ժառանգած «իմպերիալիստական քաղաքականության ապացույցը»: ԽՍՀՄ-ի վճռականությունը անհանգստացրել է Մեծ տերություններին: Ու. Չերչիլը նեղ շրջանակում ասել է, որ «Թուրքիայի և Կոստանդնուպոլսի դրությունը վճռված է և անմիջապես դառնալու է քննարկման թեմա»[27]:

Հինգերորդ՝ *«Պոտսդամի խորհրդաժողովը և ԽՍՀՄ-ի Թուրքիային ներկայացրած պահանջները»*, ենթագլխում լուսաբանվում են խաղաղության այդ վեհաժողովի նախօրեին, այնուհետև Պոտսդամում ու դրանից հետո խորհրդա-թուրքական հարաբերություններում առաջացած ճգնաժամի շուրջ ծավալված քննարկումները:

Պատերազմի ավարտից հետո Մեծ տերությունների ղեկավարների միջև կայացած բոլոր հանդիպումների ընթացքում քննարկվել են Թուրքիային Խորհրդային Միության ներկայացրած ինչպես սևծովյան նեղուցների, այնպես էլ հայկական տարածքների հարցերը: Դեռևս 1945 թ. հուլիսի 16-ին ԽՍՀՄ-ի և Մեծ Բրիտանիայի արտգործնախարարների հանդիպման ժամանակ՝ Ա. Իդենը Վ. Մոլոտովին տեղեկացրել էր, որ Լոնդոնում իր մոտ են եկել թուրքերը, և ինքը հետաքրքրություն է ցուցաբերել ԽՍՀՄ-ի՝ Թուրքիային ներկայացրած հայկական հողերի պահանջների վերաբերյալ[28]: Մոլոտովը պատասխանել է. «1921 թ. թուրքերը օգտվեցին այն բանից, որ Խորհրդային Միությունը թույլ էր և խլեցին Խորհրդային Հայաստանի մի մասը: Խորհրդային Միության հայերն էլ վիրավորված են զգում իրենց: Այդ հանգամանքը նկատի ունենալով՝ խորհրդային կառավարությունը հարց է բարձրացրել, որպեսզի օրինական ճանապարհով վերադարձնի Խորհրդային Միությանը պատկանող հողերը»: Միաժամանակ, ԽՍՀՄ-ի արտգործնախարարը հիմնավորել է հայկական հարցի առկայությունը և հայկական հողերի վերադարձնելու անհրաժեշտությունը. «Այս տարածքները (Կարսի և Արդահանի. – Ք.Մ.), որոնց մասին է խոսքը, չեն պատկանում թուրքերին»[29]: Հարցի քննարկումը նույն ոգով շարունակվել է Պոտսդամում՝ Ստալին-Չերչիլ-Տրումեն հանդիպմանը: Եվ երբ հուլիսի 23-ի նիստում Մեծ Բրիտանիայի վարչապետ Ու. Չերչիլը հանդես է եկել Թուրքիայի պաշտպանությամբ, ԽՍՀՄ-ի

---

[26] Архив внешней политики Российской Федерации, ф. 06, оп. 7, п. 2, д. 31 (Из дневника В. Молотова. Прием посла Турецкой Республики С. Сарпера. 07. 06. 1945 г.), л. 1-2.

[27] Служба Внешней Разведки Российской Федерации, Архив СВР России, Сборник документов (1935-1945), М., 2006, с. 156.

[28] Советский Союз на международных конференциях периода Великой Отечественной войны, т. VI, М., 1980, с. 37.

[29] Նույն տեղում:

ղեկավար Ի. Ստալինը հայտարարել է. «Խոսքն այն մասին է, որ վերականգնվեն մինչև I համաշխարհային պատերազմը եղած սահմանները: Ես նկատի ունեմ Կարսի մարզը, որը մինչև պատերազմը գտնվում էր Հայաստանի կազմում և Արդահանի շրջանը, որը մինչև պատերազմը գտնվում էր Վրաստանի կազմում»[30]: Սակայն տարածքային հարցի շուրջ քննարկումները պաշտոնական բնույթ չեն ունեցել: Ինչ վերաբերում էր նեղուցների խնդրին, ապա կողմերը ընդհանուր որոշում են ընդունել: Երեք երկրների ղեկավարները միակարծիք էին այն հարցում, որ Մոնտրոյի համաձայնագիրն իրեն չի արդարացրել և անհրաժեշտ է այն վերանայել: Յուրաքանչյուրն իր կողմից պարտավորվել էր Թուրքիայի հետ դրա շուրջ բանակցել:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ **«Սևծովյան նեղուցների խնդիրը հետպատերազմյան շրջանում»**, բաղկացած է չորս ենթագլխից:

Առաջին՝ *«Սևծովյան նեղուցները որպես միջազգային խնդիր»*, ենթագլխում պարզաբանվում է, թե ԽՍՀՄ-ի կողմից սևծովյան նեղուցների հարցը ինչու է դրվել օրակարգում և ներկայացվում է 1945 թ. ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի՝ Թուրքիային նեղուցների վերաբերյալ տրված հայտարարագրերը, որոնց առաջարկների հետ պաշտոնական Անկարան համակարծիք էր:

Նախ պատմական ակնարկ է արվում սևծովյան նեղուցների ռեժիմի հաստատման խնդրին: Նշվում է, որ հազվադեպ է պատահել, երբ միջազգային որևէ խնդիր իր վրա գրավեր այնպիսի ուշադրություն, ինչպիսին այդ հարցն է: Դարերի փորձը ցույց է տվել, որ պատերազմների ընթացքում սևծովյան նեղուցներն օգտագործվել են ի վնաս սևծովյան պետությունների: Այդպես է եղել 1854–1856 թթ. Ղրիմի, 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմների ժամանակ, այդպես էր նաև Առաջին համաշխարհայինի տարիներին, երբ Թուրքիան նեղուցները բացել էր գերմանական «Գեբեն» և «Բրեսլաու» ռազմանավերի առջև: Այնուհետև, 1918–1920 թթ. նեղուցներն օգտագործել են Անտանտի երկրները՝ Խորհրդային Ռուսաստանի դեմ ինտերվենցիա կազմակերպելու համար: Հետագայում նման անախորժություններից խուսափելու համար 1936 թ. Մոնտրոյի համաձայնագիրը սահմանել էր նեղուցներով նավարկելու միջազգային իրավական կարգ, որը ևս իրեն չի արդարացրել: Ըստ այդմ, պատերազմի ավարտից հետո ԽՍՀՄ-ը այդ կրկին բարձրացրել է և Պոտսդամում Մեծ տերությունները որոշել են խնդրի լուծման վերաբերյալ Թուրքիային հանձնել առաջարկներ պարունակող համաձայնագրեր: Անկարային առաջինը 1945 թ. նոյեմբերի 2-ին իր տարբերակը ներկայացրել է Վաշինգտոնը: Հայտարարագրում ասվում է՝

- նեղուցները պետք է միշտ բաց լինեն առևտրական բոլոր նավերի առջև,
- նեղուցները պետք է միշտ բաց լինեն սևծովյան երկրների ռազմական նավերի նավարկության համար,
- ոչ սևծովյան պետությունների ռազմական նավերի անցումը նեղուցներից, բացառությամբ հատուկ դեպքերի կամ էլ առանց ՄԱԿ-ի թույլատվության, արգելվում էր:

Փաստաթուղթը չի արժանացել Ստալինի հավանությանը, քանի որ այնտեղ տեղ չէր գտել Թուրքիային խորհրդային կողմի ներկայացրած պահանջները: Անգլիան ևս, այս հարցում իր շահերից ելնելով հանդես էր գալիս Թուրքիայի պաշտպանի դերում, և վերջինիս ներկայացրած նրա հայտարարագիրը, փաստորեն, ամերիկյան փաստաթղթի կրկնօրինակն էր: Պաշտոնական Անկարան համակարծիք էր անգլո-ամերիկյան առաջարկների հետ, քանզի դրանք չէին վնասում Թուրքիայի «անկախությանը և

[30] Նույն տեղում, էջ 136:

տարածքային ամբողջականությանը»: Այսպիսով, նեղուցների խնդիրը դուրս է եկել ԽՍՀՄ-ի և Թուրքիայի հետաքրքրության շրջանակից ու դարձել միջազգային հարց:

Երկրորդ ենթագլխում՝ *«ԽՍՀՄ-ի և Թուրքիայի միջև սևծովյան նեղուցների հարցի շուրջ ընթացող քննարկումների առաջին փուլը»*, նշվում է, որ Թուրքիային առաջին հայտարարագիրը ԽՍՀՄ-ը հղել է երկարատև ուշացումով՝ 1946 թ. օգոստոսի 7-ին: Ըստ թուրքական կողմի՝ այն իր բնույթով վերջնագիր էր հիշեցնում: Հայտարարագրում առաջարկվում էր հաստատել նեղուցների նոր ռեժիմ, որը բխելու էր հետևյալ դրույթներից.

- նեղուցները միշտ պետք է բաց լինեն բոլոր երկրների առևտրական նավերի համար,
- նեղուցները միշտ պետք է բաց լինեն սևծովյան պետությունների ռազմանավերի համար,
- նեղուցներով ոչ սևծովյան պետությունների ռազմանավերի անցումը, բացառությամբ հատուկ դեպքերի, պետք է արգելվի,
- նեղուցների կանոնակարգի սահմանումը պետք է մտնի Թուրքիայի և սևծովյան մյուս երկրների իրավասության մեջ,
- Թուրքիան և Խորհրդային Միությունը, որպես նեղուցներում առևտրական նավագնացությունն ու դրանց անվտանգությունը ապահովելու մեջ ամենից ավելի շահագրգիռ պետություններ, համատեղ պետք է կազմակերպեն նեղուցների պաշտպանությունը՝ այլ տերությունների կողմից սևծովյան պետությունների դեմ թշնամական նպատակներով դրանց օգտագործումը կանխելու համար:

Խորհրդային հայտարարագրի բովանդակությունը վերլուծելով՝ թուրքական թերթերը պնդում էին, թե Մոսկվայի ներկայացրած մեղադրանքներն անհիմն են, հատկապես թշնամաբար էին ընդունում դրույթների IV և V կետերը: Մինչ թուրքական պարբերականները վերլուծում և գնահատական էին տալիս խորհրդային փաստաթղթին, պաշտոնական Անկարան անհամբերությամբ սպասում էր Անգլիայի և ԱՄՆ-ի արձագանքին: Օգոստոսի 19-ին ԱՄՆ-ն, իսկ օգոստոսի 22-ին Մեծ Բրիտանիան ԽՍՀՄ-ին հանձնել են իրենց պատասխանները: Նրանք կողմ էին ԽՍՀՄ-ի ներկայացրած դրույթներից առաջին երեքի հետ, դեմ՝ IV և V կետերին, ավելին առաջարկում էին հարցը լուծել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի շրջանակում: Այսպիսով, ԱՄՆ-ն և Անգլիան ևս շահագրգռված կողմ էին հանդիսանում, ինչը թույլ էր տալիս Թուրքիային չվախենալով միջազգային ասպարեզում ԽՍՀՄ-ի դեմ միայնակ մնալու հեռանկարից մերժել Մոսկվայի առաջարկները: Նա դա անում է 1946 թ. օգոստոսի 22-ին ներկայացրած իր պատասխան հայտարարագրում, որով էլ ավարտվել է սևծովյան նեղուցների շուրջ սկսված քննարկումների առաջին փուլը:

Երրորդ՝ *«ԽՍՀՄ-ի և Թուրքիայի միջև սևծովյան նեղուցների հարցի շուրջ ընթացող երկրորդ փուլի քննարկումները և խորհրդային երկրորդ հայտարարագիրը»*, ենթագլխում դիտարկվում են առաջին հայտարարագրերի փոխանակումներից հետո հարցի հետագա զարգացման շուրջ ծավալվող գործողությունները: Գործընթացի երկրորդ փուլում Անկարայի, Վաշինգտոնի և Լոնդոնի քայլերը կախված էին միայն Մոսկվայի պահվածքից: Այդ առիթով թուրքական մամուլը տարբեր կանխատեսումներ էր անում, ենթադրելով, որ Խորհրդային Միությունը կհրաժարվի իր պահանջներից և, որպես հիմք ընդունելով ամերիկյան առաջարկները, կհամաձայնվի մասնակցել սևծովյան նեղուցների հարցի առնչությամբ հրավիրվելիք միջազգային կոնֆերանսին կամ էլ ԽՍՀՄ-ը կշարունակի ճնշում գործադրել Թուրքիայի վրա, որի արդյունքում հնարավոր է

պատերազմ ծագի: Մեկ այլ տարբերակով էլ՝ ԽՍՀՄ-ը ոչ կհրաժարվի, ոչ էլ ճնշում կգործադրի, թույլ տալով, որ նեղուցների հարցը օդում կախված մնա: Վերլուծելով այս վարկածները՝ թուրք լրագրողներն այն եզրակացությանն էին հանգել, որ խորհրդային կողմը նախընտրություն կտա վերջին տարբերակին:

1946 թ. սեպտեմբերի 24-ին խորհրդային կառավարությունը Թուրքիային ներկայացրել է նոր հայտարարագիր: Դրանից ակնհայտ է դառնում, որ ԽՍՀՄ-ին չէր բավարարել Թուրքիայի պատասխանը: Կողմերի միջև հիմնական տարաձայնությունները վերաբերում էին նեղուցների համատեղ պաշտպանությանը և նոր կանոնակարգի վերաբերյալ ապագա կոնֆերանսի մասնակից երկրների հարցերին: Թուրք հեղինակների գնահատմամբ՝ այս փաստաթուղթը չէր տարբերվում առաջինից և վկայում են, որ ԽՍՀՄ-ը նեղուցների հարցում կրկին վերադարձել է ցարիզմի քաղաքականությանը: Արտասահմանյան մամուլը կիսում էր այդ կարծիքը: Բրիտանական «Օպսերվեր» թերթի գնահատմամբ՝ «Խորհրդային ծանուցագիրը մեկ ծայրից մյուսը խմբագրված է կծու, և երբեմն սպառնալից բառերով»[31]:

Չորրորդ ենթագլխում *«Սևծովյան նեղուցների շուրջ ծավալված քննարկումների վերջին փուլը»* լուսաբանվում է նեղուցների հարցի քննարկման հետագա ընթացքը: 1946 թ. հոկտեմբերին 9-ին Վաշինգտոնը ԽՍՀՄ-ին ներկայացրել է իր պատասխան հայտարարագիրը, որը չէր տարբերվում նախորդներից: ԱՄՆ-ն կիսում էր թուրքական այն տեսակետը, որ նեղուցների խնդիրը «վերաբերում է ոչ միայն սևծովյան տերություններին, այլև մյուս պետություններին, ներառյալ և ԱՄՆ-ին»: Ըստ նրա՝ Թուրքիայի կառավարությունն այսուհետ ևս պետք է պատասխանատու լինի նեղուցների պաշտպանության համար, իսկ եթե դրանք դառնան հարձակման կամ ագրեսորի սպառնալիքի օբյեկտ, ապա այն պետք է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի վարույթի տակ գտնվող գործ հանդիսանա: Բացի այդ, ԱՄՆ-ն հայտարարում էր, որ խնդրո առարկա հարցում կարծիքների փոխանակումը ենթադրվում էր Պոտսդամի գումարվելիք կոնֆերանսում՝ բոլոր շահագրգիռ կողմերի, այդ թվում և ԱՄՆ-ի մասնակցությամբ: Վաշինգտոնի օրինակին հետևում է նաև պաշտոնական Լոնդոնը և ԱՄՆ-ի հետ համատեղ ներկայացնում է իր պատասխանը: Մեկ օր անց՝ հոկտեմբերի 10-ին, թուրքական մամուլը ոգևորվածությամբ սկսել է քննարկել երկու հայտարարագրերը, նկատելով, որ դրանք հեշտացնում են իրենց կառավարության գործը: Թուրքական կողմը, սովորության համաձայն, խորհրդային հայտարարագրին պատասխանել է վերջինը: Այլ կերպ ասած՝ պարզելով Մեծ տերությունների տեսակետը՝ Անկարայի կառավարությունը առանց տարակուսելու կարող էր մերժել խորհրդային առաջարկները:

Մինչ պաշտոնական հայտարարագրի հրապարակումը՝ Թուրքիայի անունից այս հարցի վերաբերյալ առաջինը խոսել է վարչապետ Ռեջեփ Փեքերին: Նա «Դեյլի Թելեգրաֆին» տված հարցազրույցում ասել է, թե նեղուցների հարցում Թուրքիայի դիրքորոշումը անփոփոխ է, քանի որ ԽՍՀՄ-ի առաջարկած IV և V կետերը հակասում են Մոնտրոյի համաձայնագրին և վտանգում Թուրքիայի ինքնավարությունը: Ավելին՝ վարչապետը մի կողմից անիմաստ է համարել Մոսկվայի հետ ցանկացած բանակցությունները, մյուս կողմից էլ, հակասելով ինքն իրեն, հույս է հայտնել, որ խորհրդային կառավարությունը կհամաձայնվի միջազգային կոնֆերանս հրավիրելու ԱՄՆ-ի առաջարկին: Ըստ նրա, Անկարան շահագրգռված է Մոնտրոյի համաձայնագրի հիմնական դրույթների պահպանմամբ: Հարցազրույցի վերջում Ռեջեփ Փեքերին ԽՍՀՄ-ին մեղադրել է Թուրքիայի տնտեսական ճգնաժամի համար՝ հայտարարելով, թե հարևան

[31] Տե՛ս, The Observer (London), 27. IX. 1946.

երկրի սպառնալիքները ստիպում են Թուրքիայի կառավարությանը ունեցած վերջին կոպեկները ներդնել ոչ թե տնտեսության, այլ բանակի հզորացման մեջ[32]: Վարչապետի տված հարցազրույցից մի քանի օր անց՝ հոկտեմբերի 18-ին, Անկարան ԽՍՀՄ-ին հղեց իր պաշտոնական պատասխանը: Դրանով կարելի է ավարտված համարել նաև քննարկումների երկրորդ փուլը: Այն ևս անարդյունք էր՝ կողմերն այդպես էլ համաձայնության չեկան: Սևծովյան նեղուցների հարցի շուրջ հետագայում ևս փոփոխություններ չգրանցվեցին. Մոսկվան և Անկարան շարունակում էին պնդել իրենց տեսակետները, ավելին՝ սպասվող խորհրդաժողովն այդպես էլ չհրավիրվեց: Տարիներ անց՝ 1953 թ., ԽՍՀՄ-ը պաշտոնապես հրաժարվեց Անկարայից ունեցած իր հավակնություններից:

Ատենախոսության երրորդ գլուխը՝ **«Խորհրդա-թուրքական հարաբերությունները և Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Թուրքիային ԽՍՀՄ-ի ներկայացրած տարածքային պահանջները»**, բաղկացած է հինգ ենթագլխից:

«Թուրքիային ԽՍՀՄ-ի ներկայացրած տարածքային պահանջների դրդապատճառները» վերնագրով առաջին ենթագլխում ուսումնասիրվել են Թուրքիային ԽՍՀՄ-ի կողմից տարածքային պահանջներ ներկայացնելու դրդապատճառներն ու առիթը, Անկարայի արձագանքը և ստեղծված իրավիճակից առանց վնասների դուրս գալու նրա փորձերը:

Թուրքիային տարածքային պահանջներ ներկայացնելիս՝ ԽՍՀՄ-ի առաջնային նպատակը անհավատարիմ հարևանին պատժելն էր, դրա հետ մեկտեղ էլ ցանկանում էր վերականգնել Ռուսաստանի և Օսմանյան կայսրության միջև 1914 թ. եղած պետական սահմանները: Խորհրդային Միությունն արդեն Գերմանիայից, Լեհաստանից, Ֆինլանդիայից և Ճապոնիայից հետ էր վերցրել նախկինում զիջած տարածքները և մնում էր միայն վերահաստատել Թուրքիայի հետ ժամանակին ունեցած սահմանը: Այսինքն՝ վերադարձներ Կարսն ու Արդահանը: Դա ևս հիմնավոր պատճառ էր, որ 1945 թ. հայկական հողային հարցը կրկին արդիական դառնա:

Պաշտոնական Անկարայի համար ԽՍՀՄ-ի ներկայացրած տարածքային պահանջը ոչ միայն անընդունելի էր, այլև՝ անսպասելի: Թուրքական կողմը պնդում էր, որ Կարսը և Արդահանը 1921 թ. իրեն անցել են իրավականորեն, քանի որ մինչև 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը դրանք պատկանել են Օսմանյան Թուրքիային: 1878 թ. այդ տարածքները տրվել են ցարական Ռուսաստանին, իսկ 1921 թ. վերադարձվել են նորից Թուրքիային: Այսինքն, ըստ թուրքերի, այդ տարածքները «թուրքական» են, այնտեղ բնակվում են հիմնականում թուրքեր, և ոչ թե հայեր: Թուրքական մամուլը այս առիթով գրել է, որ «խորհրդային պահանջները իրական բացահայտ ուժի քաղաքականության անցկացում է»[33], հայտարարելով, թե ԽՍՀՄ-ը վճռական չէ իր քայլերում, քանի որ վախենում է հանդիպել ուժեղ դիմադրության: Միաժամանակ Անկարան գիտակցում էր, որ հայտնվել է դժվարին իրավիճակում, որից դուրս գալու միակ ճանապարհը հզոր դաշնակիցներ ունենալն է, որոնք կարող էին դիմակայել Մոսկվային: Նրա համար այդպիսի դաշնակիցներ են դառնում Մեծ Բրիտանիան և Միացյալ Նահանգները:

Երկրորդ՝ *«Երկրորդ աշխարհամարտից հետո Հայկական հարցը խորհրդա-թուրքական հարաբերությունների լույսի ներքո և դաշնակից պետությունները»*, վերնագրով ենթագլխում ուսումնասիրվել է Հայկական հարցի զարգացման ընթացքը 1945–1947 թթ., այդ թվում Վրաստանի՝ Թուրքիային հողային պահանջ ներկայացնելու փաստը ևս:

[32] Տե՛ս, The Daily Telegraf (London), 13. X. 1946.

[33] ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ, Обзор турецкой прессы, февраль-июнь, Об отношениях между Турцией и СССР, 1946, с. 3.

Դիտարկվել է պաշտոնական Մոսկվայի, Անկարայի, Լոնդոնի և Վաշինգտոնի այս հարցում որդեգրած քաղաքականությունը: Սկզբնական շրջանում խորհրդա-թուրքական հարաբերություններում, հատկապես հողային խնդրում Անգլիան ու ԱՄՆ-ն նախընտրում էին պահպանել չեզոքություն: Պաշտոնական Լոնդոնը Թուրքիային խոստանում էր օգնել նեղուցների հարցում, իսկ Կարսի և Արդահանի հողային պահանջների խնդրում ակնարկում էր, որ Թուրքիան իր «ճարը պետք է ինքնուրյուն տեսնի»: Իհարկե, այս առաջարկն անընդունելի էր Անկարայի համար, քանի որ նեղուցները և արևելյան նահանգները նրա համար ունեին նույն կարևորությունը: Սակայն, միաժամանակ, Թուրքիայի կառավարությունը գիտակցում էր, որ ԽՍՀՄ-ի հետ վիճաբանությունն անիմաստ է, ավելին՝ 1945 թ. ստեղծվել էր մի այնպիսի իրավիճակ, որ հողերի զիջումը թվում էր անխուսափելի:

Չնայած տարածքային հարցի շուրջ առաջին քննարկումը եղել է Պոտսդամում, սակայն դաշնակից տերություններն այս խնդրին լրջորեն մոտեցել են միայն 1945 թ. սեպտեմբերին՝ Լոնդոնում կայացած արտգործնախարարների հանդիպումից հետո: Մեծ Բրիտանիան եկել էր այն եզրակացության, որ այլևս չեն կարող խուսափել Կարսի և Արդահանի հարցից: Հոկտեմբերի 5-ին այդ երկրի արտաքին գերատեսչությունն արդեն պատրաստել էր «Թուրքական տարածքների հայկական պահանջները» խորագրով 5 էջանոց տեղեկագիր, որում նշում էր որ Անկարան հրաժարվում է բավարարել ԽՍՀՄ-ի պահանջը: ԱՄՆ-ում էլ վստահ էին, որ Մոսկվան Թուրքիայի հարցում չի պատրաստվում զիջումներ անել, ինչը ստիպում էր Վաշինգտոնին միջամտել և հանդես գալ Անկարայի պաշտպանի դերում:

Խորհրդային Միությունը, սակայն, նախընտրում էր Թուրքիային ներկայացրած հողային հարցը լուծել առանց որևէ երկրի միջամտության և, ըստ այդմ, շարունակում էր նրա նկատմամբ որդեգրած իր քաղաքականությունը: Նախ, նոյեմբերի 21-ին ԽՍՀՄ-ի կառավարությունը հայտարարել է, թե ծրագրել է ներգաղթ կազմակերպել դեպի Խորհրդային Հայաստան: Դեկտեմբերի 14-ին էլ Թիֆլիսի «Կոմունիստ» թերթում հրապարակվել է վրացի ակադեմիկոսներ Ս. Ջանաշիայի և Ն. Բերձենիշվիլու՝ «Թուրքիայի նկատմամբ ունեցած մեր օրինական պահանջների մասին» վերնագրով նամակը: Վերջիններս Թուրքիային ներկայացրել են իրենց հողային պահանջները, որոնք համընկնում էին հայկական պահանջներին: Մոսկվայի վեհաժողովի բացման օրը՝ դեկտեմբերի 20-ին, «Պրավդա» և «Իզվեստիա» թերթերը ռուսերեն արտատպել են այս հոդվածը, ինչը համաժողովի մասնակիցների շրջանում շփոթմունք է առաջացրել: Հանդիպումներում ԽՍՀՄ-ը հստակեցրել է, որ հայկական պահանջները չի փոխարինել վրացականով, այլ երկուսն էլ հետապնդում է: Այսպիսով, ԽՍՀՄ-ը Թուրքիային հողային պահանջներ էր ներկայացնում ոչ միայն Խորհրդային Հայաստանի, այլև Խորհրդային Վրաստանի անունից:

Խորհրդային Միության ներկայացրած նոր պահանջներից անակնկալի եկած Լոնդոնը, երկու օր անց՝ դեկտեմբերի 22-ին, պատրաստել է «Թուրքական հողերի վրացական պահանջը» խորագրով 2 էջանոց տեղեկագիր, որում ասվում է, թե հայերը, ի տարբերություն վրացիների, խնդրո առարկա տարածքների վրա ավելի մեծ իրավունքներ ունեն: Ինչ վերաբերում է Թուրքիային, ապա նա, դեռևս ուշքի չեկած հայկական պահանջներից, ստիպված էր համակերպվել այն մտքի հետ, որ հողային խնդիրներ ունի նաև վրացիների հետ:

Խորհրդա-թուրքական հարաբերություններում լարվածությունը մնում է նաև 1946 թվականին: Նկատելի է, որ տարվա սկզբին և՛ խորհրդային, և՛ թուրքական մամուլը պահը բաց չէին թողնում մեկը մյուսին վարկաբեկելու և հարաբերություններն էլ ավելի

լարելու համար: Դրա հետ ուժեղանում էր Արևմուտքի՝ «խորհրդային ագրեսիայից» Թուրքիայի պաշտպանությունը:

Թուրքական կողմը շարունակում էր պնդել, թե հողային հարցում չի բանակցելու ԽՍՀՄ-ի հետ, ավելին՝ հունվարի 6-ին մեջլիսում վարչապետ Շ. Սարաջօղլուն հայտարարել է, որ «Կարսում և Արդահանում ոչ մի հայ չի ապրում»[34]: Այլ կերպ ասած՝ այդ տարածաշրջանում հայերի բացակայությունը Թուրքիային իրավասու է դարձնում հանդես գալու այդ հողերի իրական տիրոջ դերում: Այս հայտարարությունը, սակայն, անպատասխան չի մնացել. այդ օրերին «Նյու Յորք Թայմս»-ում հրապարակվել է պրոֆ. Ծ. Խվոստովի՝ «Պատմական իրողությունները կամբաստանեն» խորագրով նամակը, որտեղ հեղինակը Սարաջօղլուին հիշեցրել է նախ, որ 1916 թ. շուրջ 100 հազար հայ էր ապրում միայն Կարսում, ապա ավելացրել, «թե հնարավո՞ր է մեկ ազգ բնաջնջել, որպեսզի տիրեն նրա հողին»[35]:

Սարաջօղլուի վերոհիշյալ տեսակետը ստացել է պաշտոնական բնույթ: 1946 թ. փետրվարի 20-ին Անգլիայի արտգործնախարար Է. Բևինը համայնքների պալատում ունեցած ելույթում ևս նշել է, որ «Խորհրդա-թուրքական սահմանը պարտադրված չի եղել, այլ երկկողմանի բանակցությունների արդյունք է, և որ հայ ազգաբնակչությունն այստեղից տեղահանված է եղել»[36]: Այսինքն՝ նա համառոտ արտահայտել է թուրք պաշտոնյաների մտքերը, ինչը Մեծ Բրիտանիայի քաղաքական որոշ շրջանակների կողմից դատապարտվել է:

Մոսկվան, իր պահանջների հարցում որոշակի հստակեցում մտցնելու նպատակով, դիվանագիտական խաղ է վարել և մեկ այլ երկրի միջոցով փորձել է պարզել, թե Կարսի և Արդահանի պահանջից հրաժարվելու դեպքում Անկարան նեղուցների հարցում զիջումների կգնա, թե՞ ոչ: Թուրքական կողմը իր հերթին 1946 թ. փետրվարին, «Ֆրանս-Պրես» լրատվական գործակալության տեղեկատվության համաձայն, արել է հակառակ առաջարկը: Անշուշտ, երկու կողմերն էլ լրջորեն չեն մոտեցել այդ առաջարկներին:

1946 թ. գարունը թուրքերի համար դարձել է շրջադարձային. ԽՍՀՄ-ի տարածքային պահանջների խնդրին տրվեց մեկ այլ երանգ: Մարտի 5-ին Ֆուլտոնում Մեծ Բրիտանիայի նախկին վարչապետ Ու. Չերչիլի նշանավոր ելույթով սկիզբ էր դրվել «սառը պատերազմին»: Այս պայքարում Թուրքիան դարձավ Անգլիայի և ԱՄՆ-ի հավատարիմ դաշնակիցը, և վերջիններս հայկական հողային հարցի հանդեպ ցուցաբերեցին էլ ավելի սառը մոտեցում: Թուրքիայի արտգործնախարար Հ. Սաքան ապրիլի 16-ին ամերիկացի լրագրողներին տված մամուլի ասուլիսում հայտարարել է, որ, իբր, ինքը խորհրդա-թուրքական հարաբերությունների վատթարացման մասին ոչինչ չգիտի, բացի նրանից, ինչ տպել են թերթերը: Այլ կերպ ասած՝ կողմերը որդեգրել էին «անտեսման մի քաղաքականություն», որով ԽՍՀՄ-ին հասկացնում էին, թե չնայած պնդումներին՝ նման հարց գոյություն չունի:

Միաժամանակ, Մեծ Բրիտանիայի արտգործնախարարությունը 1946 թ. ապրիլի 4-ին նոր տեղեկագիր է պատրաստել՝ «Հայկական և վրացական պահանջները թուրքական տարածքների նկատմամբ» խորագրով (այն իր մեջ ներառում էր 1945 թ. հոկտեմբերի 5-ին և դեկտեմբերի 22-ին պատրաստված տեղեկագրերը): Հայտարարելով, որ խնդրո առարկա տարածքները ԽՍՀՄ-ին անհրաժեշտ են ծավալապաշտական

---

[34] Armenian Claims in the Light of Documents, Memorandum Submitted to the United Nations Organization Meeting in London, January 10, 1946, Alexandria, 1946, p. 6.
[35] Տե՛ս, New York Times (New York), 6. II. 1946.
[36] Տե՛ս, New York Times, 22. II. 1946.

նպատակներով, տեղեկագրում նշվում էր, որ դա իրենց թույլ էր տալիս պաշտպանել Թուրքիայի շահերը: Սակայն հարկ է նշել, որ տարածաշրջանում Լոնդոնը սկսում էր իր դիրքերը զիջել Վաշինգտոնին: Խորհրդա-թուրքական հարաբերությունների վատթարացումը հատկապես նպաստել է թուրք-ամերիկյան մերձեցմանը: 1946 թ. վերջին ԱՄՆ-ի պետքարտուղարի տեղակալ Դ. Աչիսոնը պաշտոնապես հայտարարել է, որ կառավարությունը վճռել է «ամեն գնով ընդդիմանալ ԽՍՀՄ-ի ոտնձգություններին և պաշտպանել Թուրքիայի շահերը»[37]: Մինչդեռ որոշ թուրք պատմաբաններ հերքում են Վաշինգտոնի փրկիչի վարկածը, հայտարարելով, որ պատերազմի դեպքում «ո՛չ դաշնակից Անգլիան, և ո՛չ էլ իր փրկարարությամբ հպարտացող Միացյալ Նահանգները օգնության չէին հասնի»[38]:

Երրորդ ենթագլխում *«Հայկական հողերի պահանջատիրության հարցը և հայ եկեղեցին 1945–1946 թթ.»* ներկայացվում է հայկական հողային պահանջատիրության հարցում ԽՍՀՄ-ի՝ հայկական եկեղեցուն հատկացրած դերը:

1938 թ. Խորեն Ա կաթողիկոս Մուրադբեկյանցի մահից ի վեր Ս. Էջմիածնի Ամենայն հայոց կաթողիկոսի աթոռը թափուր էր. խորհրդային կառավարությունը չէր շտապում ընտրել նոր կաթողիկոս: Սակայն 1945 թ. այս հարցում որոշ տեղաշարժեր են նկատվում: Ապրիլի 19-ին Խորհրդային Միության ղեկավար Ի. Ստալինը ընդունում է Մայր Աթոռի ազգընտիր տեղապահ ընտրված Գևորգ Արք. Չեորեքչյանին: Այս հանդիպումը նշանակալից է նրանով, որ վերջինս թույլատրություն ստացավ անցկացնելու կաթողիկոսական ընտրություններ: Հնարավոր է, որ Ստալինը գիտակցում էր, որ դա հոյակապ առիթ է Երևանում հայկական բոլոր գաղթօջախներից պատվիրակություններ հավաքելու համար, որոնք կպաշտպանեն Մոսկվային՝ Թուրքիային ներկայացրած հողային պահանջների հարցում: Եվ խորհրդային կառավարությունն իր հաշվարկներում չսխալվեց:

Կաթողիկոսի նոր ընտրությունը կայացավ 1945 թ. հունիսին, որին մասնակցում էր աշխարհի չորս ծայրերից Հայաստան ժամանած եկեղեցական և աշխարհիկ 113 պատգամավոր: Հունիսի 26-ի նիստի ընթացքում նրանք պատրաստել են Ի. Ստալինին ուղղված խնդրագիր: Փաստաթուղթն անդրադառնում էր հայերի երազանքի իրականացմանը, այն է՝ Թուրքիայի տարածքում գտնվող հայկական հողերի միացմանը Մայր հայրենիքին: Ավելին, սփյուռքահայերը ցանկանում էին ներգաղթել Խորհրդային Հայաստան:

Ազգային եկեղեցական Ժողովի այս նամակը բացահայտ ապացույցն էր, որ համայն հայությունը միասնական է ԽՍՀՄ-ի կողմից Թուրքիային ներկայացրած հողային պահանջի հարցում: Արդեն սփյուռքահայերը ստեղծել էին Ազգային խորհուրդներ և առանձին-առանձին իրենց պայքարն էին տանում: Կաթողիկոսի ընտրությունը սկիզբ դարձավ համատեղ շարժման համար: Բացի այդ, խորհրդային կառավարությունը հայոց եկեղեցու վրա էր դրել հայերի ներգաղթը կազմակերպելու բավականին բարդ գործընթացը: Ամենայն հայոց կաթողիկոսը հատուկ կոնդակով շեշտել է ներգաղթի կարևորությունը և դրա հետ կապված հրահանգներ տվել արտասահմանի թեմական առաջնորդներին:

Չորրորդ՝ *«Սփյուռքում ձևավորված Ազգային խորհուրդների դերակատարումը հողային պահանջատիրության հարցում 1945–1947 թթ.»*, ենթագլխում ուսումնասիրվում է հայկական տարածքների վերադարձման գործում Սփյուռքի ձեռնարկած քայլերը:

[37] *Acheson D.*, Present at the Creation, My Years in the State Department, New York, 1969, p. 196.
[38] Sti´u, Ulus (İstanbul), 23. IV. 1975.

Դեռևս 1942 թ. վերջերին հայկական գաղթօջախներում ձևավորվել և լայն ծավալ էր ընդունել «Ազգային ուժերի միասնության» գաղափարը: Արդյունքում՝ սփյուռքահայերի շրջանում ստեղծվեցին Ազգային խորհուրդներ: Առաջինը Ամերիկահայ ազգային խորհուրդն էր, որը կազմավորվել է 1944 թ., վերջինիս կից գործել է նաև ՀՅԴ կուսակցության կողմից ստեղծված «Հայկական ազգային կոմիտեն»՝ Ռուբեն Դարբինյանի և Սիմոն Վրացյանի ղեկավարությամբ: Ազգային խորհուրդներ կազմավորվեցին Ֆրանսիայում, Եգիպտոսում, Սիրիայում և Լիբանանում, Հունաստանում, Պաղեստինում, Ուրուգվայում և այլուր, որտեղ երբևիցե եղել են հայկական գաղութներ: Ազգային բոլոր խորհուրդները մեծ նվիրատվությամբ և հույսով սկսեցին իրենց գործունեությունը. հրատարակվեցին գրքեր և գրքույկներ, հոդվածներ, պատրաստվեցին հուշագրեր և դիմումներ: Բացի այդ, ի նպաստ հայոց դատի, տեղի ունեցան հանրահավաքներ և հավաքույթներ:

Սակայն հանուն արդարության պետք է ասել, որ Ամերիկահայ ազգային խորհուրդը այս պայքարում դարձավ այն ուժը, որը միավորեց աշխարհում սփռված հայկական բոլոր կազմակերպություններին և ստանձնեց կառավարման ղեկը: Ստեղծման առաջին իսկ օրից խորհուրդը ծավալել է բուռն գործունեություն: Նրա կատարած ամենակարևոր քայլը ամերիկահայերի անունից ՄԱԿ-ին ներկայացրած «Հայ ժողովրդի գործը» պատմական հուշագիրն է, որտեղ պահանջվում էր ազատ, անկախ Հայաստանի պետությանը միացնել հայկական հողերը և օժանդակել արտասահմանում ապրող ու Հայրենիք մեկնելու ցանկություն ունեցող հայերի վերադարձը: Այդ տարիներին հուշագիրը լայն արձագանք է գտել և նպաստել Հայկական հարցի զարգացմանը: Այն լուսաբանվել և մեկնաբանվել է ինչպես սփյուռքահայ, այնպես էլ խորհրդային և օտարերկրյա մամուլում:

Սփյուռքահայերի ձեռնարկած քայլերից ամենանշանակալիցը Համաշխարհային հայկական կոնգրեսի հրավիրումն էր: Միջոցառումը կայացել է Նյու Յորքում 1947 թ. ապրիլի 30-ից մայիսի 6-ը՝ Ամերիկահայ ազգային խորհրդի նախաձեռնությամբ: Սփյուռքահայերի կյանքում դա համարվել է պատմական և եզակի մի իրադարձություն: Իրենց ուղերձներում այն բարձր են գնահատել Խորհրդային Հայաստանի բարձրաստիճան այրերը և Ամենայն հայոց կաթողիկոսը: Հետագայում խորհրդային պատմաբանները փորձել են շրջանցել և մոռացության տալ Նյու Յորքում կայացած այդ աննախադեպ իրադարձությունը: Սփյուռքահայ պատմաբաններն էլ այն համարել են Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Հայկական հարցի լուծման նպատակով ստեղծված Ազգային խորհուրդների գործունեության գագաթնակետը: Այն հատկապես կարևոր է նրանով, որ միավորել է իրարից անջատ գործող հայկական ազգային խորհուրդներին և աշխարհին մեկ անգամ ևս հիշեցրել, որ Հայկական հարցը սպասում է իր արդար լուծմանը:

Սփյուռքահայերի ձեռնարկած այս քայլերը, սակայն, հակառակ ազդեցություն են ունեցել արևմտյան պետությունների վրա: Մեծ Բրիտանիան և ԱՄՆ-ն դրանցում տեսնում էին ոչ թե ազգային շարժում, այլ՝ խորհրդային ազդեցություն: Մեծ տերությունների շահերը, ինչպես միշտ, չէին համընկնում հայկական շահերի հետ: Նրանք այն տեսակետին էին, թե որքանով մեծանա և հզորանա Հայաստանը, նույնքանով էլ կավելանա Խորհրդային Միության ուժը: Իսկ դա նրանք չէին կարող թույլ տալ:

Հինգերորդ՝ *«Հայերի իրավունքների պաշտպանության ամերիկյան կոմիտեն և Հայկական հարցին լուծում չտալու հիմնական դրդապատճառը»*, ենթագլխում դիտարկվում է Հայերի իրավունքների պաշտպանության ամերիկյան կոմիտեի՝ ի նպաստ հայկական դատի կազմակերպած միջոցառումները, դրան զուգահեռ ներկայացվում է

Սպիտակ տան թուրքամետ գործունեությունը:

1945 թ. Հայկական հարցում Մեծ տերությունների աջակցությունը ստանալու նպատակով արտերկրում ապրող հայերը սկսել են համագործակցել տվյալ երկրի կառավարության անդամների, օրենսդիրների, գիտության և արվեստի ներկայացուցիչների հետ: 1945 թ. նոյեմբերին 9-ին Նյու Յորքի «Բելմոնթ Փլազ» հյուրանոցում մի խումբ նշանավոր ամերիկացիներ ստեղծել են Հայերի իրավունքների պաշտպանության կոմիտե՝ սենատոր Էդվին Սմիթի նախագահությամբ և կոնգրեսական Ռոբերտ Վ. Սելլի քարտուղարությամբ: Ստեղծման առաջին իսկ օրից կազմակերպությունը մեծ գործունեություն է ծավալել: Այսպես, 1945 թ. դեկտեմբերին դիմում է հղել Մոսկվայում հանդիպած երեք Մեծ տերությունների արտգործնախարարներին, 1946 թ. հունվարին՝ Լոնդոնում գումարված ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի առաջին նստաշրջանին մասնակից ամերիկյան ներկայացուցիչներին, իսկ 1946 թ. ապրիլի 28-ին Նյու Յորքի «Քարնեգի Հոլի» մեջ կազմակերպել է մեծ միջոցառում՝ ի նպաստ հայկական դատի: Իրենց ելույթներում սենատոր Չ. Թոբին, կոնգրեսականներ Է. Սելլը, Չ. Սևիջը և ուրիշներ Հ. Տրումենի վարչակազմից պահանջել են «արդարություն հայերի համար», այսինքն՝ հայկական հողային պահանջների արդար լուծում:

«Արդարություն հայերի համար» կոչը, սակայն, այդպես էլ չի ծառայել իր նպատակին, քանզի արդեն 1946 թ., ինչպես վերն ասվել է, սկսվել էր «սառը պատերազմը»: Իսկ 1947 թ. մարտին ԱՄՆ-ի նախագահը հրապարակել էր «Տրումենի դոկտրինան», որով երաշխավորվում էր Հունաստանի և Թուրքիայի տարածքային ամբողջականությունը: Հ. Տրումենն այդ օրերին հայտարարել էր, որ Թուրքիայի ազգային ամբողջականության պահպանմամբ ապահովում է կարգ ու կանոնը Միջին Արևելքում: «Տրումենի դոկտրինայի» հրապարակումից հետո Թուրքիան իրեն ավելի վստահ էր զգում: Նախագահ Ի. Ինյոնյուն Ռիզում ունեցած ելույթում հայտարարել էր, որ «ի տարբերություն անցած տարվա, Թուրքիայի իրավիճակը ավելի ամուր է»[39]: Ավելին, ըստ թուրքական մամուլի, իրենք են հաղթել «նյարդերի պատերազմում»:

Այնուհանդերձ, 1947 թ. հոկտեմբերի 24-ին ՄԱԿ-ում անուղղակիորեն արծարծվել է Կարսի և Արդահանի խնդիրը: Դրանից հետո այս հարցը Մոսկվան այլևս չի բարձրացրել միջազգային ասպարեզում: Սակայն դա ամենևին կապված չէ ԱՄՆ-ի՝ Թուրքիայի պաշտպանի դերում հանդես գալու փաստի հետ, ինչպես փորձում են ներկայացնել որոշ պատմաբաններ: Վաշինգտոնի սպառնալիքները չեն վախեցրել Ստալինին, քանի որ հարցը օրակարգից դուրս է եկել միայն նրա մահից հետո: Իհարկե, և՛ «սառը պատերազմը», և՛ 1949 թ. ՆԱՏՕ-ի ստեղծումը խաղացել են էական դեր, բայց դրանք չէին իրական դրդապատճառները: Մեծ է հավանականությունը, որ ԽՍՀՄ-ը Թուրքիայի նկատմամբ ճնշումը թուլացրել է երկրում սկսված սոցիալ-տնտեսական ճգնաժամի հետ կապված, այսինքն՝ Մոսկվան ստիպված էր ժամանակավորապես սառեցնել «թուրքական ծրագիրը»: Մինչդեռ այդ լռությունը ևս չի նպաստել այդ տարիներին խորհրդա-թուրքական հարաբերությունների բարելավմանը: Սևծովյան նեղուցների խնդիրը և հայկական տարածքային պահանջը ԽՍՀՄ-ի օրակարգից դուրս են եկել միայն 1953 թ. մայիսին՝ Ստալինին պաշտոնում փոխարինած Ն. Խրուշչովի օրոք, երբ Խորհրդային Միությունը պաշտոնապես հայտարարել է, որ Թուրքիայից ոչ մի պահանջ չունի:

Վերջաբանում հանրագումարի են բերվում աշխատանքի արդյունքները և արվում

[39] *ՀԱԱ*, ֆ. 326, ց. 1, գ. 199 (Թուրքիայի ՍՍՀՄ դեսպանատան ռեֆերենտի տեղեկանքները «Թուրքահայաստանի դիվանագիտական ակտերի պատմության և արևելյան վիլայեթների մասին թուրքական մամուլի և պաշտոնական շրջանակների վերաբերմունքի մասին»), թ. 28:

հետևյալ եզրահանգումները.

- Հետպատերազմյան ժամանակաշրջանում խորհրդա–թուրքական հարաբերություններում ծագած ճգնաժամի հիմնական դրդապատճառը Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին «չեզոքության» քողի տակ Թուրքիայի վարած հակախորհրդային քաղաքականությունն էր: Հասկանալի է, որ պատերազմի տարիներին Թուրքիայի պատճառով բավականին ծանր պահեր ապրած Ի. Ստալինը նպատակադրվել էր պատժել անհավատարիմ հարևանին՝ օրակարգ բերելով ինչպես սևծովյան նեղուցների վերահսկման, այնպես էլ հայկական տարածքների՝ Կարսի ու Արդահանի, վերադարձման հարցերը: Պետք է նկատի ունենալ այն իրողությունը, որ այդ հարցերը քննարկվել են դեռևս 1940 թ., սակայն ԽՍՀՄ-ը դրանց ընթացք չի տվել, թեպետ Մուստաֆա Քեմալ Աթաթուրքի կյանքի վերջին տարիներին երկու երկրների միջև արդեն լարվածություն էր նկատվում: Մեր կարծիքով, եթե պատերազմի տարիներին ԽՍՀՄ-ի նկատմամբ Թուրքիայի պահվածքը շրջահայաց լիներ, ապա Անկարան կխուսափեր, այսպես կոչված, «նյարդերի պատերազմից»:
- Պետք է նկատել նաև, որ Մոսկվային ձեռնտու էր Անկարայի նման պահվածքը, քանի որ, մեր կարծիքով, դա ԽՍՀՄ-ին հնարավորություն էր ընձեռում ընթացք տալ Թուրքիայի տարածքների հետ կապված իր ծրագրերին: Այսինքն՝ Անկարայի կողմից Մոնտրոյի համաձայնագրի խախտման դեպքերը ստիպել են խորհրդային կողմին բարձրացնել սևծովյան նեղուցների համատեղ վերահսկման հարցը, ինչը, սակայն, սահմանափակվել է միայն կողմերի միջև հայտարարագրերի փոխանակմամբ: Բացի այդ, 1945 թ. ԽՍՀՄ-ը վերականգնել էր ցարական Ռուսաստանի բոլոր սահմանները՝ բացառությամբ Օսմանյան կայսրության հետ ունեցածի, և, բնական է, որ այդ տարիներին առաջ էր եկել նաև Կարսի ու Արդահանի վերադարձման հարցը: Տարածքներ, որոնք 1878 թվականից Ռուսաստանի կազմում էին:
- Թուրքիայի համար անակնկալ ծագած հայկական հողային պահանջը խորհրդային կողմը մատուցել է բավականին նրբանկատորեն. այն, նախ, ներկայացրել է հայերի, ավելի ուշ՝ նաև վրացիների անունից: Պնդելով, թե ցանկանում է վերականգնել պատմական արդարությունը, Ի. Ստալինն ընտրել էր Թուրքիային պատժելու լավագույն միջոցը, որը ԽՍՀՄ-ին հնարավորություն էր տալիս ընդարձակել իր տարածքները նավթով հարուստ հարավային շրջաններում և սահմանակից դառնալ Իրաքին ու Սիրիային: Այլ կերպ ասած՝ Մոսկվան Հայկական հարցն օգտագործում էր ի նպաստ իր շահերի:
- Հողային պահանջատիրության հարցը եղել է հմտորեն մշակված ծրագիր: Սակայն Մոսկվան այս հարցում թույլ է տվել կոպիտ սխալներ, որոնք խոչընդոտել են գործընթացին: Դրանցից մեկը Խորհրդային Հայաստանից բացի Խորհրդային Վրաստանին ևս այս ծրագրում ընդգրկելն էր: Որոշ վերլուծաբանների կարծիքով՝ նման կերպ Ստալինը ցանկացել է ավելի մեծ հնչեղություն տալ այս խնդրին: Սակայն, հաշվի առնելով հողային պահանջատիրության հարցի վերաբերյալ Լոնդոնի պատրաստած տեղեկագրերը, կարելի է ենթադրել, որ դրանք թողել են հակառակ ազդեցությունը: Հայկական պահանջներն ավելի լուրջ էին ընդունվել, քան վրացականը. վերջինիս պահանջները որակվել են «կասկածելի»: Բացի այդ, Հայաստանն ու Վրաստանը համաձայնեցված չէին գործում: Երկու կողմերն էլ ներկայացնում էին հողային համարյա նույն պահանջները, այն բացառությամբ, որ վրացիները չէին

հավակնում միայն Կարսի մարզին: Նման իրավիճակն էլ ավելի է խճճել իրադրությունը, ավելին՝ Մեծ Բրիտանիան ու ԱՄՆ-ը դա ևս օգտագործել են ի շահ Թուրքիայի պաշտպանության:

- Պաշտոնական Մոսկվայի մշակած հայկական հողերի վերադարձման ծրագրում իրենց ուրույն տեղն են ունեցել նաև հայկական եկեղեցին ու Սփյուռքը: 1945 թ. թույլատրելով Ամենայն հայոց կաթողիկոսի ընտրությունները՝ Ստալինը, կարծես թե, դնում էր հայկական եկեղեցու հետ համագործակցության հիմքը: Ավելին, աշխարհի հայկական բոլոր գաղթօջախներից Երևան ժամանած պատվիրակությունների միջոցով Թուրքիային ներկայացրած պահանջների հարցում փորձում էր ստանալ սփյուռքահայերի աջակցությունը: Կրեմլը գիտակցում էր, որ դեռևս պատերազմի տարիներին արտերկրում ապրող հայերի կողմից Հայկական հարցի շուրջ սկսած գործընթացը պետք է օգտագործել ի նպաստ իր շահերի, այդ պատճառով Հայաստանի կառավարության ու հայոց եկեղեցու միջոցով խրախուսել է 1944–1945 թթ. ձևավորված հայկական ազգային խորհուրդների գործունեությունը:
- Խորհրդային կառավարության և սփյուռքահայերի միջև չեն հստակեցվել Թուրքիային ներկայացրած հողային պահանջները: ԽՍՀՄ-ը սահմանափակվում էր միայն Կարսի ու Արդահանի նահանգներով, իսկ սփյուռքահայերը պահանջում էին հայկական հողերի վերադարձը՝ համաձայն Սևրի պայմանագրի: Դա վկայում է, որ կողմերը չեն գործել համատեղ՝ չնայած Մեծ տերությունները արտերկրում սկսված շարժումը որակել են ոչ թե ազգային, այլ ԽՍՀՄ-ի ազդեցության արդյունք:
- Ներգաղթի վերաբերյալ ԽՍՀՄ-ի կառավարության ընդունած որոշումը նախևառաջ քաղաքական քայլ էր՝ համաշխարհային հանրության առաջ արդարացնելու Անկարային ներկայացրած հողային պահանջները, քանի որ միջազգային ֆորմալ և ոչ ֆորմալ բոլոր հանդիպումներում խորհրդային կողմը պատճառաբանում էր, որ դա անհրաժեշտ է ոչ թե Խորհրդային Միությանը, այլ Խորհրդային Հայաստանին, քանի որ վերջինիս տարածքը փոքր է և այդ պատճառով չի կարող բավարարել հայրենիք վերադառնալու սփյուռքահայերի ցանկությունը: Այս կերպ փորձ էր կատարվում ճնշում գործադրել և արագացնել հողերի վերամիավորման գործընթացը:
- Հետպատերազմյան ժամանակաշրջանում ԽՍՀՄ-ի և Թուրքիայի միջև բացակայել են տնտեսական հարաբերությունները: Նրանք համարյա գտնվել են պատերազմի շեմին. այդ են վկայում ինչպես այդ տարիների մամուլը, այնպես էլ դիվանագիտական փաստաթղթերը:
- Չնայած իր ռազմատենչ հայտարարություններին՝ սկզբնական շրջանում Թուրքիան որոշ հարցերում պատրաստ է եղել զիջումների գնալ: Լոնդոնն ու Վաշինգտոնը, նախ, դիտորդի դերում էին և հետո նախընտրում էին միջամտել միայն նեղուցների հարցում: Ավելի ուշ՝ 1946 թ., վերջիններիս քաղաքականությունը փոխվել է, ինչն ամրապնդել է Անկարայի դիրքերը:
- 1946 թ. սկսված «սառը պատերազմը», ինչպես նաև 1947 թ. «Տրումենի դոկտրինայի» և «Մարշալի պլանի» իրագործումը Թուրքիայում բացասական անդրադարձ ունեցան և՛ նեղուցների վերահսկման, և՛ հայկական տարածքների վերադարձման գործում: Աշխարհում քաղաքական իրադրությունը փոխվել էր: Եթե պատերազմի տարիներին ԽՍՀՄ-ը, Մեծ Բրիտանիան և ԱՄՆ-ն համագործակցում էին ու ֆաշիստական բլոկի երկրների դեմ պայքարում

հանդես էին գալիս որպես դաշնակիցներ, ապա պատերազմից հետո դրությունն այլ էր. նախկին դաշնակիցները հայտնվել էին տարբեր ճամբարներում:

- Մեր կարծիքով, ԽՍՀՄ-ում սկսված սոցիալ-տնտեսական ճգնաժամն է եղել այն հնարավոր դրդապատճառը, որ ստիպել է Խորհրդային Միությանը որոշ ժամանակով հետաձգել Թուրքիայի առնչությամբ իր ծրագրերը: Հասկանալի է, որ հետպատերազմյան շրջանում ԽՍՀՄ-ը ֆինանսական համապատասխան միջոցներ չուներ այդ գործողությունների համար, ուստի սառեցրել է թե՛ սևծովյան նեղուցների, թե՛ սահմանի վերանայման ծրագրերը: Խորհրդա–թուրքական հարաբերություններում ծագած խնդիրը փակվել է միայն 1953 թ. մայիսին՝ Ստալինի մահից հետո, Ն. Խրուշչովի օրոք:
- Չնայած 1945 թվականից Հայկական հարցի շուրջ Սփյուռքում ծավալված գործողությունները դրական արդյունք չեն ունեցել, սակայն կրկին բարձրացված Հայկական հարցը ոչ միայն Ամերիկահայ ազգային խորհրդի շուրջ է միավորել համայն աշխարհի հայությանը, այլև այս խնդրին վերջնական լուծում տալու համար սփյուռքահայերի կողմից մշակվել է գործողությունների նոր ռազմավարություն: Ըստ այդմ՝ հայկական ազգային խորհուրդները սկսել են համագործակցել տվյալ երկրի կառավարության անդամների, օրենսդիրների, գիտության և արվեստի ներկայացուցիչների հետ: Դրա արդյունքում, օրինակ, 1945 թ. նոյեմբերի 9-ին ԱՄՆ-ի բարձրաստիճան այրերի և մշակույթի գործիչների նախաձեռնությամբ ստեղծվել է Հայերի իրավունքների պաշտպանության ամերիկյան կոմիտեն: Հետպատերազմյան շրջանում սկսված նման քաղաքականությունը հիմք է հանդիսացել հետագայում օտարերկրյա խորհրդարաններում Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման գործընթացի համար:

ՔՐԻՍՏԻՆԵ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ

1. Հայկական հարցը 1945 թ. խորհրդա-թուրքական հարաբերությունների լույսի ներքո. – ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2004, № 2, էջ 195–201:
2. Հայկական դատը և սփյուռքահայությունը 1944–1945 թթ. – Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, Երևան, 2006, № 4, էջ 252–260:
3. Մեծ տերությունները և Հայկական հարցը 1945–1946 թթ. – Հայկական հարցի միջազգայնացման 130-ամյակը և պատմության դասերը, Գիտաժողովի նյութեր, Երևան, 2009, էջ 116–131:
4. Խորհրդա-թուրքական հարաբերությունները 1945-1947 թվականներին. սևծովյան նեղուցների խնդիրը և Հայկական հարցը, Երևան, 2009, 50 էջ:

МЕЛКОНЯН КРИСТИНЕ ФЕЛИКСОВНА

СОВЕТСКО-ТУРЕЦКИЕ ОТНОШЕНИЯ В 1945–1947 ГГ.

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02 – «Всемирная история».

Защита состоится 30 декабря 2009 г., в 14^{00} часов на заседании специализированного совета 006, действующего при Институте востоковедения НАН РА, по адресу: 375019, г. Ереван, пр. Маршала Баграмяна, 24 г.

РЕЗЮМЕ

Изучение отношений между Турцией и Советским Союзом в период с 1945 по 1947 гг. имеет важное научное значение. Тема актуальна, поскольку на сегодняшний день вопрос о черноморских проливах и армянских территориях продолжает оставаться спорным.

Выбор темы обусловлен необходимостью основательного изучения проблем, возникших в советско-турецких отношениях в 1945–1947 гг.

Цель научной работы – представить анализ кризисных явлений в советско-турецких отношениях в послевоенный период, а также исследовать политику, проводимую Анкарой, Москвой, Вашингтоном и Лондоном в отношении черноморских проливов и армянских территорий, выявить причины, в силу которых представленные Советским Союзом требования к Турции после долгих обсуждений так и не получили решения, а также рассмотреть предпринятые в этом направлении шаги и сложившуюся политическую ситуацию.

В процессе работы над диссертацией были использованы различные архивные источники, монографии, публикации на армянском, русском, турецком, английском и французском языках.

Диссертационная работа состоит из введения, трех глав, заключения, списка первоисточников и литературы.

Во введении обосновывается актуальность, важность и новизна темы, излагаются цели и задачи исследования, характеризуются методологическая основа и практическое значение работы, а также дается краткий обзор использованных источников и литературы.

Первая глава диссертации – «**Советско-турецкие отношения в годы Второй мировой войны (1939–1945 гг.)**» – состоит из пяти параграфов.

В первом – «*Позиция Турции в начале Второй мировой войны*» – говорится о политике Турции в годы Второй мировой войны, в частности, о советско-турецких отношениях накануне Отечественной войны.

Во втором – «*Советско-турецкие отношения в 1941–1943 гг.*» – рассматривается двойная игра, и в особенности антисоветская политика, которая под личиной нейтралитета Турции велась во благо фашистских стран.

Третий параграф, озаглавленный «*О попытках Великобритании вовлечь Турцию в войну в 1943 г.*», отражает обсуждение на Тегеранской конференции странами-союзниками вопроса о вступлении в войну Турции и неудачные попытки Великобритании привлечь Турцию на свою сторону.

Четвертый параграф – «*Советско-турецкие отношения в конце 1944 г. в начале 1945 г.*» – подробно представляет решение Турции о вступлении в войну и отказ СССР в продлении советско-турецкого договора о дружбе и нейтралитете от 1925 г.

В пятом параграфе, озаглавленном «*Потсдамская конференция и требования, предъявленные СССР Турции*», излагаются обсуждаемые на Потсдамской конференции проблемы, касающиеся кризиса советско-турецких отношений, а также предъявленные Турции требования в отношении черноморских проливов и армянских территорий Карса и Ардагана.

Вторая глава диссертации – «**Вопросы о черноморских проливах в поствоенный период**» – состоит из четырех параграфов. В первом параграфе – «*Черноморские проливы как международная проблема*» – говорится о причинах, в силу которых вопрос о черноморских проливах вновь был выдвинут на повестку дня, а также рассматриваются ноты, относящиеся к проливам и представленные Турции США и Великобританией.

Во втором параграфе, озаглавленном «*Первый этап переговоров вокруг Черноморских проливов между СССР и Турцией*», рассматриваются требования СССР, предъявленные Турции нотой от 7 августа 1946 г. В этой связи обстоятельно комментируются статьи, опубликованные в турецкой прессе, а также рассматриваются ответные ноты Советского Союза, переданные США, Великобритании и Турции.

Третий параграф – «*Второй этап переговоров между СССР и Турцией вокруг черноморских проливов и вторая советская нота*» – рассматривает статьи, вышедшие в турецкой прессе после обмена первыми нотами. Представлены комментарии по созданию объединенного союза против СССР по вопросу о черноморских проливах во главе с Соединенными Штатами, а также комментарий в отношении второй ноты, предъявленной Советским Союзом Турции, и прения вокруг этого документа в прессе.

Четвертый параграф – «*Последний этап обсуждений по вопросу черноморских проливов*» – посвящен рассмотрению последующего развития вопроса черноморских проливов и ответных нот, переданных Москве Вашингтоном, Лондоном и Анкарой, а также комментариям по этому вопросу, нашедшим отражение в прессе.

Третья глава диссертации – «**Советско-турецкие отношения и представленные Советским Союзом после Второй мировой войны территориальные требовании к Турции**» – состоит из пяти параграфов. В первом – «*Причина представленных территориальных требований, выдвинутых СССР Турции*» – исследуются основные причины, побудившие СССР предъявить Турции территориальные требования, а также первая реакция Анкары и позиция Великих государств.

Во втором параграфе – «*Армянский вопрос в свете советско-турецких отношений после Второй мировой войны и союзные страны*» исследуется Армянский вопрос в 1945–1947 гг., а также рассматриваются территориальные требования, предъявленные Турции со стороны Грузии. Представлена также официальная позиция Москвы, Анкары, Лондона и Вашингтона.

Третий параграф, озаглавленный «*Вопрос о требовании возврата армянских территорий и армянская церковь в 1945-1946 гг.*», отражает позицию церкви по вопросу о требовании возврата армянских территорий в поствоенный период, роль церкви как в

решении территориальных проблем, так и в организации репатриации армян.

В четвертом параграфе – «*Роль Национальных советов, организованных диаспорой по вопросу о требовании возврата армянских территорий в 1945–1947 гг.*» – рассматриваются предпринятые диаспорой в военные и поствоенные годы шаги по разрешению проблемы возврата армянских территорий.

В пятом параграфе – «*Американский комитет по защите интересов армян и основные причины неразрешения армянского вопроса*» – речь идет о мероприятиях, проведенных Американским комитетом по защите интересов армян в решении Армянского вопроса. Помимо этого, вскрываются основные причины, в силу которых Армянский вопрос в очередной раз не получил справедливого решения.

В заключении представлены основные выводы по рассмотренным проблемам.

CHRISTINE MELKONYAN
SOVIET-TURKISH RELATIONS IN 1945–1947